



## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2019



Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն | Министерство иностранных дел Республики Армения  
Ministère des Affaires étrangères de la République d'Arménie | Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
2018Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

1. <u>ՆԱԽԱԲԱՆ</u>	3
2. <u>ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑ</u>	14
3. <u>ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ</u>	19
4. <u>ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ</u>	21
5. <u>ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ</u>	22
6. <u>ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ</u>	23
7. <u>ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐ</u>	25
7.1. <u>ՎՐԱՍՏԱՆ</u>	26
7.2. <u>ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ</u>	26
7.3. <u>ԹՈՒՐԲԻԱ</u>	27
8. <u>ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ</u>	28
9. <u>ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ</u>	29
10. <u>ԱՍԻԱ-ԽԱՂԱՂԾՎԿԻԱՆՈՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ</u>	32
11. <u>ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ</u>	34
12. <u>ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ</u>	35
13. <u>ԱՖՐԻԿԱՆ ՄԱՅՐՑԱՄԱՔԻ ԵՐԿՐՆԵՐ</u>	36
14. <u>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ</u>	37
14.1. <u>ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ</u>	37
14.2. <u>ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ</u>	38
14.3. <u>ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ</u>	39
14.4. <u>ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ</u>	39
14.5. <u>ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ</u>	40
14.6. <u>ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ         ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ</u>	44
14.7. <u>ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ</u>	44
14.8. <u>ՀՅՈՒՍԻՍԱՏԼԱՆՏՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ</u>	45
15. <u>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ</u>	46
15.1. <u>ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԵՎԱԶԱՓՈՒՄ</u>	46
16. <u>ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ</u>	47
17. <u>ԳԼՈԲԱԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՉ ԿՈՆՎԵՆՑԻՈՆԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ</u>	48

18. <a href="#"><u>ԽԱՂԱՂԱՊԱՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ</u></a>	49
19. <a href="#"><u>ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԴԱՇՏ</u></a>	50
20. <a href="#"><u>ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ</u></a>	50
21. <a href="#"><u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u></a>	51
22. <a href="#"><u>ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u></a>	51
23. <a href="#"><u>ՀՀ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ</u></a>	52
24. <a href="#"><u>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ</u></a>	52

## 1. ՆԱԽԱԲԱՆ

2018թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը ՀՀ նախագահի, ապա ՀՀ նոր սահամանադրության ուժի մեջ մտնելուց հետո, ՀՀ վարչապետի ուղղագծած արտաքին քաղաքականության ուղենիշերի և տրված հանձնարարականների ու ՀՀ կառավարության ծրագրի հիման վրա շարունակել է աշխատանքները, որոնք ուղղված էին հանրապետության արտաքին անվտանգության բաղադրիչի ամրապնդմանը, երկրի զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների և երաշխիքների ապահովմանը, բարեկամ և գործընկեր պետությունների հետ փոխշահավետ համագործակցության զարգացմանը, միջազգային կազմակերպություններում և ինտեգրացիոն գործընթացներում ներգրավվածության խորացմանը: Ակտիվ քայլեր են ձեռնարկվել միջազգային հարթակներում Հայաստանի հեղինակության և դիրքերի ամրապնդման, միջազգային և տարածաշրջանային տնտեսական ու ֆինանսական կառույցների հետ ակտիվ համագործակցության զարգացման ուղղությամբ: ԱԳՆ գործունեության կարևոր մաս է հանդիսացել արտերկրում ՀՀ և նրա քաղաքացիների շահերի պաշտպանությունը, հայկական մշակութային ժառանգության պահպանումը:

Հայաստանը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունների՝ Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Ֆրանսիական Հանրապետության հետ շարունակել է ջանքերը՝ ուղղված **Ղարաբաղյան հիմնախնդրի** բացառապես խաղաղ կարգավորման գործընթացն առաջ մղելու նպատակով համապատասխան պայմանների ստեղծմանը:

Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացին առնչվող հարցերը քննարկվել են երկկողմ և բազմակողմ ձևաչափերով հանդիպումների ժամանակ, որոնց ընթացքում նախարարը, նախարարի տեղակալները, ինչպես նաև ԱԳՆ այլ ներկայացուցիչները ներկայացրել են Հայաստանի և ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների համատեղ ջանքերը:

Մայիսի 12-ին, արտաքին գործերի նախարարի պաշտոնում նշանակվել է Զոհրաբ Մնացականյան: Հունիսին տեղի է ունեցել ԱԳ նախարարի առաջին հանդիպումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ, հուլիսին՝ Բրյուսելում կայացել է Զոհրաբ Մնացականյանի և Էլմար Մամեդյարովի առաջին հանդիպումը, որին հաջորդել են Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների հանդիպումները սեպտեմբերին Նյու Յորքում և դեկտեմբերին Միլանում: ԵԱՀԿ նախարարների խորհրդի շրջանակում Միլանում տեղի ունեցած հանդիպումից հետո ընդունվել է համատեղ հնգակողմ հայտարարություն Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների և ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարների կողմից:

Սեպտեմբերին Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի կենտրոնակայանում, Գլխավոր ասամբլեայի 73-րդ նստաշրջանում իր ելույթում վարչապետ Նիկոլ Փաշինյանը Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ ընդգծել է Արցախի կարգավիճակը և անվտանգությունը՝ շեշտելով վերջինիս բանակցային գործընթացում ներգրավելու կարևորությունը:

2018թ. ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափով ընդունվել է 8 հայտարարություն:

Հայաստանում ապրիլ-մայիսյան իրադարձություններից և թավշյա հեղափոխության արդյունքում կառավարության ձևավորումից հետո նոր կառավարության ծրագրում ընդհանուր դրույթներով ներկայացվեցին ՀՀ արտաքին քաղաքական առաջնահերթությունները:

2018թ. Հայաստանի Հանրապետության դիվանագիտության առաջնահերթությունների շարքում շարունակում էր մնալ **Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և դատապարտումը**, ինչպես նաև՝ Հայաստանի ակտիվ ներգրավվածությունը նոր ցեղասպանությունների, մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելմանն ուղղված միջազգային հանրության ջանքերին:

**Փետրվարին** Նիդերլանդների Ներկայացուցիչների պալատի կողմից ընդունվել են բանաձևեր, որոնք վերահաստատում են դեռևս 2004թ. Հայոց ցեղասպանության ճանաչումը և պարտավորեցնում Հոլանդիայի կառավարության ներկայացուցչին հինգ տարին մեկ՝ ապրիլի 24-ին ներկա գտնվել Երևանում ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառումներին:

**Մարտի 23-ին** Ժնևում ՄԱԿ-ի՝ Մարդու իրավունքների խորհրդի 37-րդ նստաշրջանում, կոնսենսուսով ընդունվել է Հայաստանի նախաձեռնած՝ «Ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ բանաձևը» («Prevention of genocide»): Հայաստանին են միացել և բանաձևը համահեղինակել ավելի քան վեց տասնյակ պետություններ, որոնք ներկայացնում են Մարդու իրավունքների խորհրդի տարածաշրջանային բոլոր խմբերը:

**Դեկտեմբերի 9-11-ը** Երևանում անցկացվել է «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» երրորդ գլոբալ ֆորումը:

2018թ. Հայոց ցեղասպանությունը ճանաչել և դատապարտել են նաև մի շարք երկրների տեղական ինքնակառավարման մարմիններ:

**Ռուսաստանի Դաշնության** հետ շարունակվել են բոլոր ուղղություններով հայ-ռուսական ռազմավարական դաշնակցային համագործակցության հետագա ամրապնդմանն ու ընդլայնմանն ուղղված ջանքերը:

Տարին նշանավորվել է քաղաքական ակտիվ երկխոսությամբ, տարածաշրջանային և միջազգային հարթակներում շահերի արդյունավետ համադրմամբ տարածաշրջանում խաղաղության և անվտանգության ապահովմանը, տնտեսական, էներգետիկ՝ ներառյալ ատոմային էներգիայի, տրանսպորտի, արտակարգ իրավիճակների, ապակենտրոնացված, գյուղատնտեսության, հումանիտար և այլ ոլորտներում համատեղ նախագծերի իրականացմանն ուղղված միասնական քայլերով: Քայլեր են ձեռնարկվել երկկողմ ռազմատեխնիկական համագործակցության զարգացման ուղղությամբ:

Տարվա ընթացքում Հայաստանի ու **Ռուսաստանի** ղեկավարների, արտաքին գործերի նախարարների միջև կայացել են տասնյակ հանդիպումներ երկկողմ և բազմակողմ ձևաչափերով:

Ակտիվ գործակցություն է ծավալվել նաև խորհրդարանական հարթակում, ինտենսիվ են եղել միջգերատեսչական կապերը:

Տարվա ընթացքում ստորագրվել են շուրջ երկու տասնյակ միջկառավարական, միջգերատեսչական և միջտարածաշրջանային իրավական փաստաթղթեր:

Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգում կարևոր տեղ է զբաղեցրել **Ամերիկայի Միացյալ Նահանգների** հետ բարեկամական գործընկերության զարգացումը:

**Փետրվարին և մայիսին** Հայաստան է այցելել ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Բրիջիթ Բրինքը, մարտին՝ ԱՄՆ պետքարտուղարի տնտեսական և բիզնեսի հարցերով գլխավոր փոխտեղակալ Բրայան ՄաքՖիթերսը:

**Հոկտեմբերի 26-ին** Հայաստանում է գտնվել ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջոն Բոլթոնը, ով հանդիպումներ է ունեցել ՀՀ վարչապետի պաշտոնակատարի և բարձրաստիճան այլ պաշտոնյաների հետ:

**Եվրոպական միության** հետ փոխգործակցության ընդլայնումը շարունակել է մնալ Հայաստանի արտաքին քաղաքական հիմնական ուղղություններից մեկը:

**Փետրվարի 21-ին** Բրյուսելում ստորագրվել է «ՀՀ-ԵՄ Գործընկերության առաջնայնություններ» փաստաթղթի հաստատման մասին որոշումը:

**Ապրիլի 11-ին** ՀՀ ԱԺ-ի կողմից միաձայն վավերացվել է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ): Համաձայնագիրը վավերացվել է ԵՄ անդամ 9 երկրների կողմից: Հունիսի 1-ից ուժի մեջ է մտել ՀԸԳՀ ժամանակավոր կիրարկումը:

**Հունիսին և դեկտեմբերին** ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանն աշխատանքային այցեր է կատարել Բրյուսել: Նախարարը հանդիպումներ է ունեցել ԵՄ բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիի, հանձնակատարներ Յոհաննես Հանի և Դիմիտրիս Ավրամոպուլոսի, Եվրոպական խորհրդարանի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Դևիդ ՄըքԱլիսթերի հետ:

**Հունիսի 21-ին** Բրյուսելում կայացել է ՀԸԳՀ-ով նախատեսված ՀՀ-ԵՄ բարձրագույն քաղաքական մարմնի՝ Գործընկերության խորհրդի անդրանիկ նիստը, որին մասնակցող ՀՀ պատվիրակությունը ղեկավարում էր ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը:

**Հուլիսի 11-12-ը** ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն աշխատանքային այցով գտնվել է Բրյուսելում: Հանդիպումներ են կայացել Եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի, Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժան-Կլոդ Յունկերի և ԵՄ բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիի հետ:

**Նոյեմբերի 27-ին** ՀՀ ԱԳՆ-ում տեղի է ունեցել ՀՀ-ԵՄ Գործընկերության կոմիտեի անդրանիկ նիստը: ԵՄ-ն վերահաստատել է իր աջակցությունը ՀՀ կառավարության բարեփոխումների գործընթացին և հավանություն տվել ՀԸԳՀ-ի կիրարկման ճանապարհային քարտեզի նախագծին՝ որպես լավ մեկնարկային կետի:

2018թ. շարունակվել է ուշադրության կենտրոնում մնալ **հարևան երկրների** հետ հարաբերությունների առավել ընդլայնումը:

**Վրաստանի** հետ շարունակվել է զարգանալ փոխշահավետ համագործակցությունը բազմաթիվ ոլորտներում՝ տրանսպորտ, էներգետիկա, զբոսաշրջություն, գյուղատնտեսություն և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում երկու պետությունների միջև պարբերաբար իրականացվել են տարբեր մակարդակների պաշտոնական և աշխատանքային փոխայցելություններ, այդ թվում՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի այցելությունները Վրաստան, ինչպես նաև Վրաստանի վարչապետեր Գիորգի Կվիրիկաշվիլիի և Մամուկա Բախտաձեի այցելությունները Հայաստան:

**Թուրքիայի Հանրապետության** ապակառուցողական դիրքորոշման պատճառով ընթացիկ տարում հայ-թուրքական հարաբերությունների ոլորտում որևէ դրական տեղաշարժ չի դիտվել:

Մարտի 1-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով դադարեցվել է «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունների կնքման ընթացակարգը:

ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը տարբեր առիթներով հայտնել է, որ Հայաստանը պատրաստ է առանց նախապայմանների հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը՝ միաժամանակ նշելով, որ այս դիրքորոշմամբ Հայաստանը որևէ կերպ չի նսեմացնում 1915թ. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը, որովհետև Ցեղասպանության ճանաչման հարցը ՀՀ համար հայ-թուրքական հարաբերությունների խնդիր չէ, այլ միջազգային անվտանգության խնդիր է, ինչպես նաև ՀՀ ներդրումն է ցեղասպանությունների կանխարգելման շարժմանն ու գործընթացին:

Շարունակվել են ջանքեր գործադրվել՝ ուղղված **Իրանի Իսլամական Հանրապետության** հետ բարիդրացիական փոխշահավետ համագործակցության խորացմանը:

**Սեպտեմբերի 26-ին** վարչապետ Նիկոլ Փաշինյանը Նյու Յորքում հանդիպում է ունեցել Իրանի նախագահ Հասան Ռոհանիի հետ, որի ընթացքում քննարկել են հայ-իրանական հարաբերությունների օրակարգային տարբեր հարցեր:

Կայացել են նաև տարբեր գերատեսչությունների ղեկավարների մակարդակով հանդիպումներ:

**Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ)** շրջանակներում Հայաստանն իր ակտիվ մասնակցությունն է ունեցել կառույցում ծավալվող գործընթացներին: Ուշադրություն է հատկացվել ԱՊՀ մասնակից պետությունների հետ ավանդական կապերի խորացմանը:

Հայաստանի և ԱՊՀ անդամ պետությունների միջև կայացել են մի շարք հանդիպումներ, անցկացվել են քաղաքական խորհրդակցություններ:

**Սեպտեմբերի 28-ին** Դուշանբեում ԱՊՀ Պետությունների ղեկավարների խորհրդի նիստի ընթացքում կայացել են վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումները Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնի և Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևի հետ:

Տարվա ընթացքում նշանակվել են ՀՀ նոր դեսպաններ Բելառուսում, Թուրքմենստանում, Ղազախստանում և Ուկրաինայում:

Հաշվետու տարում շարունակվել է ներգրավվածությունը **ԵԱՏՄ** շրջանակներում տեղի ունեցող ինտեգրացիոն գործընթացներին: Հաշվի առնելով սահմանադրական փոփոխությունները՝ մայիսից Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդում Հայաստանը ներկայացված է եղել վարչապետի մակարդակով:

**Մայիսի 14-ին՝** Սոչիում անցկացված Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստի շրջանակներում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպել է Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի, Մոլդովայի նախագահ Իգոր Դոդոնի հետ:

**Հոկտեմբերի 22-ին** Երևանում անցկացվել է Եվրասիական տնտեսական համաժողովի խորհրդի նիստը, որին զուգահեռ 22-24-ը կայացել է ԵԱՏՄ և երրորդ երկրների պատվիրակությունների մասնակցությամբ «Եվրասիական շաբաթ» միջազգային համաժողովը:

**Դեկտեմբերի 6-ին** Սանկտ Պետերբուրգում կայացած Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստի շրջանակներում Հայաստանը ստանձնել է ԵԱՏՄ մարմիններում 2019թ. նախագահությունը:

Հայաստանի Հանրապետությունը շարունակել է խորացնել իր ներգրավվածությունը **Միավորված ազգերի կազմակերպության** կառույցներում:

ԱԳՆ շարունակել է իր ակտիվ ներգրավվածությունը՝ Կայուն զարգացման նպատակների ազգայնացման գործընթացին:

**Ապրիլի 16-ին** Նյու Յորքում ՀՀ-ն ընտրվել է ՄԱԿ-ի **Կանանց կարգավիճակի հանձնաժողովի** անդամ՝ 2019-2023թթ. ժամանակահատվածի համար:

**Հունիսի 13-ին** Նյու Յորքում ՀՀ-ն ընտրվել է ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի անդամ՝ 2019-2021թթ. ժամանակահատվածի համար:

**ՏՆՏՍՈՑԽՈՐՀ**-ի բարձր մակարդակի քաղաքական ֆորումին մասնակցելու նպատակով Նյու Յորքում գտնվող ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը **հուլիսի 18-ին** հանդիպել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշի հետ, որի ընթացքում ներկայացրել է Հայաստանում տեղի ունեցած վերջին ներքաղաքական զարգացումները, ընդգծվել է կառավարության՝ Հայաստանում ընտրությունների պատշաճ կազմակերպման գործում միջազգային գործընկերների հետ սերտորեն համագործակցելու պատրաստակամությունը:

2018թ. սեպտեմբերին ՀՀ թեկնածությունն առաջադրվել է 2021թ. Փարիզում կայանալիք **ՅՈՒՆԵՍԿՕ**-ի Գործադիր խորհրդի ընտրություններին՝ 2021-2025թթ. ժամանակահատվածի համար:

Շարունակել են **եվրոպական երկրների** հետ երկկողմ կապերի ամրապնդման ուղղությամբ գործադրվող ջանքերը: Հաշվետու տարում նախագահ Սերժ Սարգսյանն աշխատանքային այցեր է կատարել Ֆրանսիա (հունվարի 22), Գերմանիա (փետրվարի 16-18, Մյունխենի անվտանգության համաժողովին մասնակցելու նպատակով և մարտի 9-ին՝ շախմատի աշխարհի առաջնության հավակնորդների մրցաշարի բացման արարողությանը մասնակցելու նպատակով): Նախագահ Սերժ



Սարգսյանը ապրիլի 5-ին պաշտոնական այց է կատարել Սուրբ Աթոռ, աշխատանքային այց Իտալիա և Մալթայի Ինքնիշխան Մարտական ուխտ:

Նախագահ Արմեն Սարգսյանը պաշտոնական այց է կատարել Գերմանիա (նոյեմբերի 27-29), աշխատանքային այցեր՝ Ֆրանսիա (նոյեմբերի 12-13) և Իտալիա (նոյեմբերի 14):

Աժ նախագահ Արա Բաբլոյանը այցեր է իրականացնել Չեխիա (օգոստոսի 22-24) և Շվեյցարիա (սեպտեմբերի 27-28):

**Հուլիսի 11-ին** վարչապետ Նիկոլ Փաշինյանն աշխատանքային այց է կատարել Բելգիա: Բրյուսելում՝ ՆԱՏՕ-ի գազաթափողովի շրջանակներում, վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում է ունեցել Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ:

**Սեպտեմբերի 13-14-ին, հոկտեմբերի 5-ին, նոյեմբերի 11-ին** վարչապետը աշխատանքային այցեր է կատարել Ֆրանսիա:

ԱԳ նախարարի մակարդակով պաշտոնական այցեր են կատարվել Շվեդիա (մարտի 12-13), Դանիա (մարտի 14), Գերմանիա (հունիս 28-29), Բելգիա (դեկտեմբեր 4):

**Ապրիլի 9-ին** Հայաստան է այցելել Միացյալ Թագավորության Եվրոպայի և Ամերիկաների հարցերով պետնախարար Ալեն Դանքնը, **մայիսի 28-ին՝** Ֆրանսիայի Եվրոպայի և արտաքին գործերի նախարար Ժան-Իվ Լը Դրիանը:

**2018թ.** ակտիվ աշխատանքներ են իրականացվել **Ասիա-խաղաղօվկիանոսյան** տարածաշրջանի պետությունների հետ հարաբերությունների առավել խորացման ուղղությամբ:

**Չինաստանի** հետ շարունակական և հետևողական համատեղ աշխատանք է իրականացվել քաղաքական, տնտեսական, մշակութային, անվտանգության, պաշտպանության, զբոսաշրջության, քաղաքականության, տեղական ինքնակառավարման, կրթության ոլորտներում:

**Օգոստոսի 22-ին** Երևանում կայացել է չինարենի խորացված ուսուցմամբ Հայ-չինական բարեկամության դպրոցի բացման արարողությունը:

**Սեպտեմբերի 30-ին** Նյու-Յորքում ՀՀ ԱԳ նախարար Զ. Մնացականյանը հանդիպում է ունեցել ԶԺՀ ԱԳ նախարար Վանգ Յիի հետ:

2018թ. ընթացքում, նախորդ տարվա համեմատ, 90%-ով ավելացել է են Չինաստանից Հայաստան զբոսաշրջիկների ներհոսքը:

Տարվա ընթացքում տեղի է ունեցել «Հայաստանի Հանրապետության կառավարության և **Ճապոնիայի** կառավարության միջև ներդրումների ազատականացման, խրախուսման և պաշտպանության մասին» համաձայնագրի ստորագրումը, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և **Ճապոնիայի** կառավարության միջև «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի՝ հնագիտական գտածոների վերականգնման և պահպանման համար սարքավորումների բարելավման ծրագրի» հայտագրերի փոխանակման և դրամաշնորհի համաձայնագրի ստորագրման արարողությունը:

**Սեպտեմբերի 2-4-ը** տեղի է ունեցել **Ճապոնիայի** ԱԳ նախարար Տարո Կոնոյի այցը Հայաստան, որը Ճապոնիայի ԱԳ նախարարի՝ երբևէ Հայաստան կատարած առաջին այցն էր:

**Հուլիսի 26-30-ը** Հայաստան է այցելել **Ինդոնեզիայի Հանրապետության** Ժողովրդական խորհրդատվական ժողովի փոխնախագահ Հ. Մահյուդինի գլխավորած պատվիրակությունը:

**Սեպտեմբերի 26-ին** Նյու Յորքում ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը և **Կիրիբատիի** նախագահ, արտաքին գործերի և միգրացիայի նախարար Թանեթի Մաամաուն ստորագրել են դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ արձանագրություն:

2018թ. զգալի աշխուժացում է արձանագրվել **աֆրիկյան մայրցամաքի** երկրների հետ հարաբերություններում:

Հայաստան պաշտոնական այց է կատարել **Մադագասկարի** Հանրապետության արտաքին գործերի նախարար Անրի Ռաբարի-Նձական:

Հայաստան են այցելել նաև **Ռուանդայի և Գաբոնի** արտգործնախարարները, որն այս երկրներից առաջին բարձրաստիճան այցն էր Հայաստան:

**Սեպտեմբերին** Նյու Յորքում ՄԱԿ կենտրոնակայանում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում է ունեցել **Ռուանդայի** նախագահ Փոլ Կագամեի և **Աֆրիկյան միության** հանձնաժողովի նախագահ Մուսա Ֆակիի հետ:

ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը Երևանում Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության նախարարական 35-րդ համաժողովի շրջանակներում հանդիպել է **Գամբիայի, Գվինեայի Հանրապետության, Սենեգալի և Տոգոյի** արտգործնախարարներին հետ:

**Հոկտեմբերի 10-ին** ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հանդիպել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության նախարարական 35-րդ համաժողովի շրջանակներում Հայաստան ժամանած **Գամբիայի** արտաքին գործերի, միջազգային համագործակցության և արտերկրում բնակվող գամբիացիների հարցերով նախարար Մամադու Թանգարայի հետ: Հանդիպման ընթացքում Հայաստանի և Գամբիայի արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները ստորագրել են դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ արձանագրություն:

**Հոկտեմբերի 11-ին** ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հանդիպել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթաժողովի աշխատանքներին մասնակցող **Գվինեայի** Հանրապետության արտգործնախարար Մամադի Տուրեի, **Սենեգալի** արտգործնախարար Սիդիկի Կաբայի և Աֆրիկյան ինտեգրացիայի, հայրենադարձության և ֆրանկոֆոնիայի հարցերով նախարար Մբազնիկ Նդիայեի, **Տոգոյի** արտաքին գործերի նախարար Ռոբերտ Դյուսսեյի հետ:

Հայաստանի Հանրապետությունը շարունակել է քայլեր ձեռնարկել **Մերձավոր և Միջին Արևելքի** երկրների հետ տարբեր ոլորտներում համագործակցությունը զարգացնելու ուղղությամբ:

**Լիբանանի** հետ հարաբերությունները նշանավորվել են բարձրաստիճան փոխայցելություններով: Տարվա ընթացքում մեկ պաշտոնական և մեկ աշխատանքային այց է կատարվել Լիբանան ՀՀ վարչապետի մակարդակով:

**Փետրվարի 21-22-ը** Հայաստան պաշտոնական այց է կատարել Լիբանանի Հանրապետության նախագահ Միշել Աունը:

Երկար տարիներ պատերազմական գործողությունների պատճառով տարբեր կացարաններում ապաստանած և երբևէ գործունեությունը չդադարեցրած միակ դիվանագիտական ներկայացուցչությունը՝ **Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոսությունը** հունվարին վերադարձել է իր հիմնական նստավայր: Տեղի է ունեցել գլխավոր հյուպատոսության շենքի վերաբացումը:

**Փետրվարի 15-ին** տեղի է ունեցել **Քուվեյթի** սոցիալական հարցերի և աշխատանքի նախարար, տնտեսական հարցերով պետնախարար տիկին Հինդ Սաբիի Ալ-Սաբիիի այցը Հայաստան:

**Հունվարի 24-ին** Դավոսում Համաշխարհային տնտեսական համաժողովի շրջանակներում ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը հանդիպել է **Իրաքի Քուրդիստանի** վարչապետ Նեջիրվան Բարզանին:

Նյու Յորքում, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 73-րդ նստաշրջանի շրջանակներում, ՀՀ արտաքին գործերի նախարար Զ. Մնացականյանը հանդիպել է **Ալժիրի** ԱԳ նախարար Աբդ Էլ-Կադեր Մուսահիլի և **Թունիսի** ԱԳ նախարար Խեմայիս Զհինավիի հետ:

**Հոկտեմբերի 11-12-ը** Երևանում կայացած Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթաժողովին մասնակցել են **Թունիսի** նախագահ Բեժի Կաիդ Էլ Սեբսիի, **Լիբանանի** նախագահ Միշել Աունի, **Մարոկկոյի** ԱԳ նախարար Նասեր Բուրիտայի, **Արաբական Միացյալ Էմիրությունների** պետնախարար Զաքի Նուսեյբայի, **Մավրիտանիայի** ԱԳ նախարար Իսմայիլ Ուլդ Շեյխ Ահմեդի գլխավորած պատվիրակությունները, **Եգիպտոսի** հնությունների նախարար Խալիդ Ալ Անանին:

Ֆրանկոֆոնիայի նախարարական 35-րդ համաժողովի և 17-րդ գագաթաժողովի շրջանակներում Երևանում **հոկտեմբերի 7-ին** ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հանդիպել է **Կանադայի** զբոսաշրջության, պաշտոնական լեզուների և Ֆրանկոֆոնիայի նախարար Մելանի Ժոլիի հետ:

**Հոկտեմբերի 12-13-ը** տեղի է ունեցել Կանադայի վարչապետ Զասթին Թրյուդոյի պաշտոնական այցը Հայաստան:

**Հոկտեմբերի 7-12-ը** Երևանում կայացել է **Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության** 17-րդ գագաթաժողովը, որին մասնակցելու համար Հայաստան է ժամանել մոտ 100 պատվիրակություն, որոնցից 35-ը գլխավորում էին նախագահներ, փոխնախագահներ, վարչապետ և փոխվարչապետ, մնացածները՝ նախարարների կամ դեսպանների մակարդակով: Երկու օրվա ընթացքում Ֆրանկոֆոնիայի պետությունների և կառավարության ղեկավարները քննարկել են արդիական գլոբալ հիմնախնդիրներ և մարտահրավերներ ներկայացնող հարցեր, ինչպես նաև գագաթաժողովի՝ «Ապրել միասին» կարգախոսի ներքո Ֆրանկոֆոնիայի կազմակերպության հնարավոր ներդրումն այդ խնդիրների կարգավորման գործում:

Հայաստան այցելած բարձրագույն ղեկավարների թվում էին Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը՝ տիկնոջ հետ, Կանադայի վարչապետ Զասթին Թրյուդոն, ինչպես նաև Մոնակոյի

արքայազնը, Բելգիայի վարչապետը, Շվեյցարիայի և աֆրիկյան մի շարք պետությունների նախագահներ:

Պետությունների և կառավարության ղեկավարների կողմից վերջնական քննարկումների արդյունքներում ընդունվել են **Երևանյան հռչակագիրը** և 6 բանաձև, այդ թվում՝ Ճգնաժամային իրավիճակների, ճգնաժամերից դուրս գալու և խաղաղության ամրապնդման վերաբերալ բանաձևը, որում Ֆրանկոֆոնիայի անդամ երկրների և կառավարությունների ղեկավարները վերահաստատել են *Լեռնային Ղարաբաղի հակամարտության* կարգավորմանն ուղղված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից գործադրվող ջանքերը սատարելու իրենց դիրքորոշում:

Շարունակվել են ակտիվ աշխատանքները **Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության** շրջանակներում ներգրավվածության ուղղությամբ՝ ԵԱՀԿ բոլոր երեք ուղղություններով: Տարվա ընթացքում ԱԳ նախարարը երկու հանդիպում է ունեցել ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Թոմաս Գրեմինգերի հետ: Զոհրաբ Մնացականյանը հանդիպել է նաև ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Գեորգի Ծերեթելիի, ԵԱՀԿ գործող նախագահի Հարավային Կովկասի հարցերով հատուկ ներկայացուցիչ Ռուդոլֆ Միխալկայի և ԵԱՀԿ մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչ Արլեն Դեզիրի հետ:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի փակվելուց հետո ՀՀ և ԵԱՀԿ հետ շարունակվել են Հայաստանում ԵԱՀԿ-ի հետ համագործակցության Ծրագրի իրականացման աշխատանքները:

2018թ. Հայաստանը շարունակել է ակտիվորեն աշխատանքներ իրականացնել **Եվրոպայի խորհրդի** կանոնադրական և մասնագիտացած մարմինների շրջանակներում: Հունվար ամսին տեղի է ունեցել ՀՀ նախագահի պաշտոնական այցը Եվրոպայի խորհուրդ:

**Հունիսի 12-ին** ՀՀ ԱԳՆ-ում տեղի է ունեցել Հայաստան-ԵԽ 2015-2018թթ. Գործողությունների ծրագրի ղեկավար (միջգերատեսչական) կոմիտեի նիստը՝ 2015-2018թթ. ԳԾ արդյունքներն ամփոփելու և 2019-2022թթ. ԳԾ-ի առաջնահերթ ուղղությունները քննարկելու նպատակով:

**Սեպտեմբերի 15-21-ը** տեղի է ունեցել Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան:

**Նոյեմբերի 19-21-ը** տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի աշխատանքային այցը Եվրոպայի խորհուրդ, որի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ ԵԽ Գլխավոր քարտուղարի, ԵԽԽՎ նախագահի, ՄԻԵԴ նախագահի, Մարդու իրավունքների հանձնակատարի, Վենետիկի հանձնաժողովի նախագահի հետ: Դիտորդական առաքելությունով Հայաստան է ժամանել ԵԽԽՎ պատվիրակությունը՝ դեկտեմբերի 9-ի ՀՀ արտահերթ խորհրդարանական ընտրությունները դիտարկելու նպատակով:

Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի (ԱԳԳԾ) շրջանակներում շարունակվել է Հայաստանի և **Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության (ՆԱՏՕ)** միջև փոխգործակցությունը:

**Հուլիսի 12-ին** ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցել է Բրյուսելում ՆԱՏՕ-ի գագաթաժողովի շրջանակներում կայացած Աֆղանստանում «Հաստատական աջակցություն»

առաքելության մասնակից երկրների և կառավարությունների ղեկավարների մակարդակով հանդիպմանը:

**Դեկտեմբերի 4-5-ը** ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը Բրյուսելում՝ ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում մասնակցել է «Հաստատական աջակցություն» առաքելության մասնակից և պոտենցիալ մասնակից երկրների արտաքին գործերի նախարարների ձևաչափով Հյուսիսատլանտյան խորհրդի նիստին: Այցի շրջանակներում նախարար Զոհրաբ Մնացականյանը հանդիպում է ունեցել ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի տեղակալ Ռոզ Գոտեմոլլերի հետ, որի ընթացքում քննարկվել են Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության ներկայիս ընթացքը և հեռանկարները:

2018թ. ՀՀ ԱԳ նախարարության ուշադրության կենտրոնում է եղել **արտաքին տնտեսական հարաբերությունների** զարգացման ուղղությունը:

Տարվա ընթացքում ՀՀ դեսպանությունների հետ շարունակվել են աշխատանքները՝ ՀՀ արտաքին քաղաքականության տնտեսական բաղադրիչի զարգացմանն առնչվող ՀՀ կառավարության համապատասխան որոշումներից բխող գործողությունների պլանավորման և իրականացման ուղղությամբ:

Իրականացվել են աշխատանքներ «Դուբայ ԷՔՍՊՈ-2020» համաշխարհային ցուցահանդեսին ՀՀ մասնակցության ուղղությամբ:

Աջակցություն է ցուցաբերվել «Բիզնես Արմենիա» հիմնադրամի նախաձեռնություններին արտերկրում, մասնավորապես ԱՄԷ-ում, Չինաստանում Հայաստանի զարգացման հիմնադրամի (ՀԶՀ) ներկայացուցիչներ նշանակելու ուղղությամբ:

**2018թ. հունիսի 27-ին** Երևանում տեղի ունեցած ՄԾՏՀ ԱԳ նախարարների խորհրդի 38-րդ հանդիպումով, որի ժամանակ բացման ելույթով հանդես է եկել ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը, ավարտվել է կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության նախագահության շրջանը (2018թ. հունվար-հունիս):

**Հունվարի 19-ին** Հայաստանը դարձել է Միջազգային Ծովային Կազմակերպության (ՄԾԿ) լիիրավ անդամ:

Արտաքին գործերի նախարարությունը շարունակել է համակարգել **մարդու իրավունքների ոլորտում** պետական կառավարման մարմինների գործունեության համապատասխանեցումը ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին:

Արտաքին քաղաքականության օրակարգում են եղել **գլոբալ անվտանգության և ոչ կոնվենցիոնալ խնդիրները**:

2018թ. ընթացքում ԱԳՆ կողմից պատրաստվել և ստորագրման է ներկայացվել **77 միջազգային պայմանագիր** և ՀՀ միջազգային պայմանագրերի մասին օրենքի շրջանակներից դուրս միջազգային պայմանագիր չհանդիսացող միջազգային բնույթի 8 փաստաթուղթ:

Նախարարության կողմից տարվա ընթացքում իրականացվել է **81 միջազգային պայմանագրի վավերացման կամ հաստատման** գործընթաց: 2018թ. ընթացքում **ուժի մեջ է մտել 54 միջազգային պայմանագիր:**

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները աջակցել են **խորհրդարանական դիվանագիտության** ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ ցուցաբերելով համակողմանի օժանդակություն միջխորհրդարանական կապերի զարգացմանը, միջազգային կազմակերպությունների խորհրդարանական ձևաչափում փոխգործակցության սերտացմանը և ակտիվացմանը:

Լրացուցիչ ջանքեր են գործադրվել մի շարք երկրների հետ ապակենտրոնացված համագործակցության զարգացման ուղղությամբ:

Արտգործնախարարության մշտական ուշադրության կենտրոնում է եղել **արտերկրում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը**, ճգնաժամային իրավիճակներում հայտնված ՀՀ քաղաքացիներին և ազգությամբ հայերին օգնության ցուցաբերումը: ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչության և հյուպատոսական հիմնարկների կողմից սպասարկվել է շուրջ 153 000 քաղաքացի:

Ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակահատվածում կայացել է ՀՀ նախագահներ Սերժ Սարգսյանի և Արմեն Սարգսյանի, վարչապետեր Կարեն Կարապետյանի և Նիկոլ Փաշինյանի, առաջին փոխվարչապետ Արարատ Միրզոյանի և ԱԳ նախարարներ Էդվարդ Նալբանդյանի ու Զոհրաբ Մնացականյանի արտերկիր կատարած թվով 69 պաշտոնական և աշխատանքային այց, տեղի են ունեցել օտարերկրյա շուրջ 114 բարձրաստիճան պատվիրակությունների պետական, պաշտոնական և աշխատանքային այցելություններ Հայաստանի Հանրապետություն, որոնք բոլորն անցկացվել են բարձր կազմակերպական և համապատասխան արարողակարգային մակարդակով: Ինչպես նաև համապատասխան աջակցություն է ցուցաբերվել ՀՀ նախարարություններին, գերատեսչություններին, տարածքային կառավարման պետական մյուս մարմիններին՝ ՀՀ ժամանող թվով 52 բարձրաստիճան պատվիրակությունների ընդունելության կազմակերպման հարցում:

Տարվա ընթացքում շարունակվել են ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումների վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացմանը, մեր երկրի հեղինակության ամրապնդմանն ուղղված քայլերը:

Մայիսի 12-ին ԱԳ նախարարի պաշտոնը ստանձնելուց հետո Զոհրաբ Մնացականյանը կատարել է շուրջ 23 աշխատանքային և պաշտոնական այց, որոնց ընթացքում ունեցել է 150-ից ավելի հանդիպումներ, որոնցից 53 երկրների ԱԳ նախարարների, մեկ տասնյակ միջազգային կառույցների ղեկավարների հետ:

2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել Կիրիբատիի և Գամբիայի հետ:

## 2. ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑ

Հայաստանում տեղի ունեցած թավշյա հեղափոխությունից հետո Հայաստանի իշխանությունները վերահաստատեցին հանձնառությունը շարունակելու ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափում ղարաբաղյան հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման ուղղությամբ գործընթացը, որի հիմքում պետք է ընկած լինեն միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները, մասնավորապես, ժողովուրդների իրավահավասարությունը և ինքնորոշման իրավունքը: Արցախի կարգավիճակը և անվտանգության ապահովումը բանակցային գործընթացում Հայաստանի առաջնահերթ գերակայություններն են: Բանակցությունների արդյունավետության բարձրացման նպատակով ընդգծվել է խաղաղության հաստատման համար համապատասխան մթնոլորտի առկայությունը՝ ներառյալ վստահության և անվտանգության միջոցների ամրապնդումը, հակամարտության սրման ռիսկերի նվազեցումը, և կողմերի ագրեսիվ հռետորաբանության բացառումը: Վերահաստատվեց, որ Արցախը որպես հակամարտության հիմնական կողմ պետք է որոշիչ ձայն և ներգրավվածություն ունենա իրական և տևական խաղաղությանն ուղղված հանգուցալուծման գործընթացում:

ՀՀ վարչապետ ընտրվելուց հետո՝ մայիսի 8-ին, Նիկոլ Փաշինյանն այցելեց Արցախ, որտեղ հանդիպեց Արցախի նախագահ Բակո Սահակյանի հետ: Ստեփանակերտում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ վարչապետ Փաշինյանը նշեց, որ Արցախը որպես բանակցային կողմ պետք է մասնակցի բանակցային գործընթացին, քանզի ի տարբերություն Հայաստանի նախորդ ղեկավարների՝ իր դեպքում չկա ոչ իրավական, ոչ քաղաքական, ոչ էլ բարոյական հիմնավորում: Արցախի ժողովուրդը չի մասնակցում Հայաստանի ընտրություններին և ունի իր իշխանությունը:

2018թ.-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն իրականացրել են 3 տարածաշրջանային այց՝ [փետրվարի 8-ին](#), [հունիսի 12-ին](#) և [հոկտեմբերի 29-ին](#): ԱԳ նախարարը Մինսկի խմբի համանախագահների հետ հանդիպել է 7 անգամ (Կրակովում [հունվարի 18](#), Երևանում [փետրվարի 8](#), Երևանում [հունիսի 12](#), Բրյուսելում [հուլիսի 11](#), Նյու Յորքում [սեպտեմբերի 26](#), Երևանում [հոկտեմբերի 29](#), Միլանում [դեկտեմբերի 5](#)):

Հայաստանի և Ադրբեյջանի ԱԳ նախարարների միջև կայացել է 4 հանդիպում՝ [հունվարի 18-ին՝ Կրակովում](#), [հուլիսի 11-ին՝ Բրյուսելում](#), [սեպտեմբերի 26-ին՝ Նյու Յորքում](#), [դեկտեմբերի 5-ին՝ Միլանում](#): Հաշվետու ժամանակաշրջանում տեղի է ունեցել Հայաստանի վարչապետի և Ադրբեյջանի նախագահի երկու ոչ պաշտոնական, բաց օրակարգով հանդիպում՝ Դուշանբեում և Սոչիում: Սեպտեմբերի վերջին Դուշանբեում Հայաստանի վարչապետի և Ադրբեյջանի նախագահի միջև հանդիպման ընթացքում ձեռք են բերվել գործնական պայմանավորվածություններ իրավիճակի սրման վտանգների նվազեցման, հրադադարի ամրապնդման և կողմերի միջև օպերատիվ կապի հաստատման վերաբերյալ:

[Դեկտեմբերի 6-ին Միլանում](#) նախարարների հանդիպման արդյունքներով ընդունվեց հնգակողմ հայտարարություն, որում, մասնավորապես, վերահաստատվում էր Դուշանբեում ձեռք

բերված փոխըմբռնումը կյանքի կոչելու կարևորությունը՝ ինտենսիվորեն աշխատելու հակամարտության գոտում լարվածության հետագա թուլացման և ժողովուրդներին խաղաղությանը նախապատրաստելու ուղղությամբ:

Հայկական կողմը մշտապես ընդգծել է, որ խաղաղությանը նպաստող միջավայրն էական նշանակություն ունի բանակցային գործընթացի համար: Այս առնչությամբ նշանակալի ներդրում կլինի Դուշանբեի համաձայնությունների, ինչպես նաև վստահության մեխանիզմների ստեղծման վերաբերյալ նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունների իրագործումը: Հակամարտության բոլոր կողմերի ժողովուրդներին խաղաղությանը նախապատրաստելուն ուղղված իրական ջանքերը և ռազմատենչ հոգետրաբանությունից ու ատելության քարոզից հրաժարվելը նույնքան կարևոր է:

**ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ձևաչափով ընդունվել է 8 հայտարարություն՝ [հունվարի 18](#) (Կրակով), [հունիսի 14](#) (Երևան), [հուլիսի 12](#) (Բրյուսել), [նոյեմբեր 2](#), [դեկտեմբեր 6](#) (Միլան), ինչպես նաև տարածաշրջանային այցի արդյունքներով՝ [փետրվարի 11](#), [ապրիլի 23](#), [մայիսի 15](#):**

**Հունվարի 24-ին** ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ԵԽԽՎ լիազուրկ նիստի իր ելույթում մանրամասն անդրադարձ է կատարել ղարաբաղյան հիմնախնդրին:

**Փետրվարի 17-ին** ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը Մյունխենի անվտանգության համաժողովում ունեցած ելույթում անդրադարձ է կատարել ԼՂ հիմնահարցին՝ նշելով, որ Լեռնային Ղարաբաղի խնդիրը պետք է լուծվի որքան հնարավոր է շուտ՝ խաղաղ ճանապարհով՝ այդ հարցում ապավինելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների՝ Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների անվերապահ աջակցությանը:

**Սեպտեմբերի 26-ին** ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայի 73-րդ նստաշրջանում ունեցած իր ելույթում անդրադառնալով ԼՂ հիմնախնդրի կարգավորման գործընթացին՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնավորապես նշեց, որ «Արցախի Հանրապետության կարգավիճակը և անվտանգությունը լինելու է Հայաստանի Հանրապետության բացարձակ առաջնահերթությունը բանակցային գործընթացում: Հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու ցանկացած փորձ ուղղակի սպառնալիք է տարածաշրջանային անվտանգության, ժողովրդավարության և մարդու իրավունքների համար: Հայաստանը կշարունակի իր կառուցողական ներգրավվածությունը հակամարտության կարգավորման խաղաղ գործընթացում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ձևաչափով, որին էլ տրված է հակամարտության կարգավորման միջազգայնորեն ճանաչված միակ մանդատը: Ադրբեյջանը պետք է փոխի բանակցությունների հանդեպ իր անհարգալից վերաբերմունքը, պետք է լիովին հրաժարվի ցանկացած ռազմական լուծման գաղափարից և իրագործի բոլոր նախորդ համաձայնագրերը: Ավելին, եթե Ադրբեյջանն իսկապես հավատարիմ է խաղաղ գործընթացին, ապա պետք է սկսի երկխոսել այս հակամարտության հիմնական սուբյեկտի՝ Լեռնային Ղարաբաղի հետ: Ադրբեյջանն ամեն առիթով հայտարարում է, որ Ղարաբաղը պետք է լինի իր տարածքի մի մասը: Միևնույն ժամանակ հայտարարում է, որ չի բանակցելու Լեռնային Ղարաբաղի հետ: Խնդիրն այն է,



թե ինչպես կարող է Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ հավակնություն ներկայացնել առանց նույնիսկ ԼՂ-ի հետ երկխոսելու: Դա հնարավոր է: Դա հնարավոր է, եթե միայն Ադրբեջանի ղեկավարությանը հետաքրքրում է ոչ թե ժողովուրդը, այլ բուն տարածքը: Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ Ադրբեջանի ղեկավարության մտադրությունն այն է, որ Ղարաբաղը մաքրվի հայերից, ինչպես եղավ Նախիջևանում: Սա իրավունք է տալիս Լեռնային Ղարաբաղին ասել, որ Ադրբեջանի մաս կազմելը Ղարաբաղի բնակչության համար կնշանակի լիակատար բնաջնջում: Հետևաբար Ղարաբաղը չպետք է լինի Ադրբեջանի կազմում, եթե որևէ մեկը չի ցանկանում թույլ տալ հայ ժողովրդի նոր ցեղասպանություն»:

**Հունիսի 22-ին** ԱԳ երկրների ԱԳ նախարարների ոչ պաշտոնական 10-րդ հանդիպմանը ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը վերահաստատեց Հայաստանի հավատարմությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության բացառապես խաղաղ կարգավորմանը՝ միջազգայնորեն համաձայնեցված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափի ներքո՝ ընդգծելով, որ Արցախի կարգավիճակը և անվտանգությունը Հայաստանի գերակա առաջնահերթություններն են: «Խաղաղությանը նպաստող մթնոլորտն առանցքային է բանակցային գործընթացի արդյունավետության բարձրացման համար և պետք է հատկապես կարևորվի: Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև շփման գծի, ինչպես նաև Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանի երկայնքով լարվածությունը, ռազմատենչ և ատելության հռետորաբանությունը, մարդկանց միջև իրական շփումների արգելափակումը պետք է վճռականորեն մերժվեն: Ե՛վ ԵՄ անդամ երկրները, և՛ Արևելյան գործընկերության երկրները պետք է խստորեն ձեռնպահ մնան բոլոր այն գործողություններից, որոնք հանգեցնում են տարածաշրջանում սպառազինությունների մրցավազքին, զերծ մնան այնպիսի գործողություններից, որոնք խոչընդոտում են խաղաղության գործընթացը կամ խաթարում են բանակցությունների համաձայնեցված ձևաչափի աշխատանքները»:

**Սեպտեմբերի 13-ին** ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդի 39-րդ նստաշրջանին ունեցած իր ելույթում ՀՀ ԱԳ նախարար Մնացականյանը նշեց. «Հայաստանը և հայ ժողովուրդը եղել են Ադրբեջանի կողմից զանգվածային և սիստեմատիկ ատելության և այլատյացության հռետորաբանության մշտական թիրախ: Ադրբեջանական պետական քարոզչությունը ոչ միայն թիրախավորված քաղաքականության հետևանք է, այլև թույլ ժողովրդավարական ինստիտուտների, ազատ մամուլի բացակայության և մարդու իրավունքների ցածր մակարդակի հետևանք:

Մենք ականատես ենք լինում Ադրբեջանի կողմից հայ ժողովրդի դեմ ուղղված ռազմական հռետորաբանության հաճախակիացման և ագրեսիվ ռազմատենչության միջև անմիջական կապին: 2016թ. ապրիլին Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի ռազմական ագրեսիայի ընթացքում իրականացված հանցագործությունները վերահաստատում են ինքնորոշման իրավունքի իրացման արդիականությունը: Այս իրավունքը Լեռնային Ղարաբաղի բնակչության համար կենսական նշանակություն ունի:

Հայաստանը վերահաստատում է իր հստակ աջակցությունը մարդու իրավունքների համընդհանրությանը և դրանց՝ հավասար հիմքերի վրա կիրառելիությանը՝ ՄԱԿ-ի

կանոնադրությանը, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին և այլ հիմնարար գործիքներին համահունչ, առանց որևէ խտրականության և հակադրության: Միաժամանակ, «ոչ մեկին դուրս չթողնելու» հանձնառությունը 2030թ. Կայուն զարգացման օրակարգի հիմնասյունն է: Մենք պետք է ընդունենք այն տարածքների և ժողովուրդների գոյությունը, որոնք պայքարում են իրենց իրավունքների, առաջին հերթին՝ ինքնորոշման իրավունքի իրականացման համար»:

Հոկտեմբերի 24-ին ԱԺ-ում ունեցած ելույթի ժամանակ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդգծեց, որ Լեռնային Ղարաբաղի հարցի ցանկացած կարգավորում պետք է ընդունելի լինի Հայաստանի, Արցախի և Ադրբեյջանի ժողովուրդների համար:

**Դեկտեմբերի 6-ին** ԵԱՀԿ 25-րդ նախարարական խորհրդի նիստին ԱԳ նախարարի պաշտոնակատար Մնացականյանը իր խոսքում մասնավորապես նշեց. «Երեսուն տարի առաջ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը ոտքի ելավ սկսելու մեր նոր պայքարն ընդդեմ պատմական անարդարության և հանուն ինքնորոշման, մարդկային արժանապատվության և ազատության: Մարդու հիմնարար այս իրավունքների մերժումը և նրանց խաղաղ նկրտումների դեմ ուժի կիրառումը հակամարտության սկզբնապատճառն է: Կենսական սպառնալիքը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կյանքին և անվտանգությանը ընկած է հակամարտության հիմքում:

Անհրաժեշտ է, որ ռիսկերի նվազեցման միջոցներն ուժեղ աջակցության արժանանան ԵԱՀԿ բոլոր մասնակից պետությունների կողմից: Հարձակվողական զենքերի վաճառքը և մատակարարումը նպաստում են ուժի և դրա սպառնալիքի կիրառմանը: Բոլոր ներգրավված մասնակից պետությունները պետք է վերանայեն իրենց այս գործելաոճը: Այն, ինչ ոմանք ներկայացնում են որպես գործարք, մեր ժողովրդի համար մահացու զենք է»:

**Հոկտեմբերին** Երևանում կայացած Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթաժողովի շրջանակներում ընդունվել է նաև Ճգնաժամային իրավիճակների հանգուցալուծման և խաղաղության ամրապնդման վերաբերյալ եզրափակիչ բանաձևը, որտեղ ևս մեկ անգամ ամրագրվել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության անդամ պետությունների աջակցությունը ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից գործադրվող ջանքերին: Սա 2012թ.-ից ի վեր արդեն չորրորդ նմանօրինակ բանաձևն է, բայց այս անգամ ամրագրված է հակամարտության վերաբերյալ առավել համապարփակ ձևակերպում, որով ՖՄԿ անդամ պետությունների և կառավարությունների ղեկավարները կոչ են անում նաև բոլոր կողմերին ներգրավվել հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման բանակցային գործընթացին՝ տևական խաղաղության հաստատման, ինչպես նաև լարվածության նվազեցման, հրադադարի ռեժիմի հարգման և նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման ուղղությամբ:

**Փետրվարի 22-ին** արտգործնախարար Է. Նալբանդյանն ընդունել է Հարավային Կովկասում և Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարին: ԵՄ հատուկ ներկայացուցչին՝ **մայիսի 29-ին** Հայաստան կատարած հերթական այցի ընթացքում ընդունել է

նորանշանակ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը: Հանդիպումների ընթացքում քննարկվել են Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակներում ՀՀ-ԵՄ համագործակցության հեռանկարները, ԵՄ հետ մուտքի արտոնագրերի ազատականացման երկխոսությանը և գործողությունների ծրագրի մեկնարկին առնչվող հարցերը: Անդրադարձ է կատարվել ղարաբաղյան հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորմանն ուղղված Հայաստանի և ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների համատեղ ջանքերին: ԵՄ հատուկ ներկայացուցչի հետ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հերթական անգամ հանդիպել է [դեկտեմբերի 6-ին](#)՝ Միլան կատարած այցի շրջանակներում:

Շարունակվել են խորհրդակցությունները Հայաստանի և Արցախի արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև:

**Մայիսի 18-19-ին և սեպտեմբերի 17-ին** ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանն այցելել է Ստեփանակերտ, որի շրջանակներում հանդիպումներ է ունեցել Արցախի բարձրագույն ղեկավարության՝ նախագահ Բակո Սահակյանի, ԱԺ նախագահ Աշոտ Ղուկյանի և ԱԳ նախարար Մասիս Մայիլյանի հետ:

Հայաստանի Հանրապետության և Արցախի արտաքին գործերի նախարարությունների միջև քաղաքական խորհրդակցություններ անցկացնելու նպատակով [մարտի 26-ին](#) ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Աշոտ Հովակիմյանը, իսկ [հունիսի 28-ին](#) ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանն այցելել են Արցախ: Խորհրդակցությունների ընթացքում քննարկվել են երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև առկա համագործակցության ընդլայնմանն ու զարգացմանն առնչվող հարցերի լայն շրջանակ: Խորհրդակցությունների շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել նաև Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի, ԱԳ նախարար Մասիս Մայիլյանի և ԱԺ նախագահ Աշոտ Ղուկյանի հետ:

**Մայիսի 22-ին** Ավստրալիայի Ռայդ քաղաքի քաղաքային խորհուրդը միաձայն ընդունել է բանաձև՝ ի սատարումն Արցախի անկախության: Բանաձևում քաղաքային խորհուրդը կոչ է արել կենտրոնական կառավարությանը՝ պաշտոնապես ճանաչել Արցախի անկախությունը և ամրապնդել Ավստրալիայի հարաբերություններն Արցախի ու նրա քաղաքացիների հետ:

**ՀՀ ԱԳՆ համակարգել է արտերկրում արցախյան շարժման 30-ամյակի և սումգայիթյան ջարդերի 30-ամյա տարելիցին նվիրված միջոցառումները:**

[Փետրվարի 27-ին](#) ԱԳ նախարար Է. Նալբանդյանը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի բարձր մակարդակով հանդիպմանն անդրադարձել է Սումգայիթյան ոճրագործության 30-ամյակին, 2016թ. ապրիլին Արցախում Ադրբեջանի կողմից իրականացված միջազգային մարդասիրական իրավունքի կոպտագույն խախտումներին և շարունակվող հակահայկական ատելության քարոզչությանը: «Երբ առկա է կյանքի անմիջական սպառնալիք, առաջնային նշանակություն է ձեռք բերում հակամարտության գոտում բնակվող անձանց համար ՄԱԿ-ի համապատասխան

գործակալությունների և հատուկ ընթացակարգերի հասանելիության ապահովումը, մարդասիրական օգնության տրամադրումը: ...Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը չպետք է զրկվի մարդու իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ համագործակցելուց Ադրբեյջանի առարկության պատճառով, մի երկրի, որը տխրահռչակ է հենց մարդու իրավունքների ոտնահարմամբ»:

Կազմակերպվել են ցուցահանդեսներ, ֆիլմերի դիտումներ, համերգներ, հուշ-երեկոներ, որոնց մասնակցել են ոչ միայն հայ համայնքի, այլև նստավայր երկրների հասարակական, քաղաքական, գիտական շրջանակների ներկայացուցիչներ: Մի շարք երկրների օրենսդիր մարմինների ներկայացուցիչներ հանդես են եկել սուվեյնիտետի ջարդերը դատապարտող հայտարարություններով: Հրապարակվել են հոդվածներ, հարցազրույցներ բազմաթիվ օտարերկրյա պարբերականներում: Կազմակերպվել են մի շարք դասախոսություններ և քննարկումներ նշյալ թեմաներով:

**Մայիսի 17-ին** ԱՄՆ Ռոդ Ալենդ նահանգի ներկայացուցիչների պալատը միաձայն բանաձև է ընդունել Սուվեյնիտետ քաղաքի հայ բնակչության կոտորածի 30-րդ տարելիցի կապակցությամբ:

### 3. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄ, ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ԱՌԱՋՄՂՈՒՄ

2018թ. Հայաստանի Հանրապետության դիվանագիտության առաջնահերթությունների շարքում շարունակում էր մնալ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և դատապարտումը, ինչպես նաև Հայաստանի ակտիվ ներգրավվածությունը ցեղասպանությունների, մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելմանն ուղղված միջազգային հանրության ջանքերին:

ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները սփյուռքահայ համայնքային կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպել են ոգեկոչման միջոցառումներ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 103-րդ տարելիցին:

**Փետրվարի 22-ին** Նիդերլանդների Ներկայացուցիչների պալատի կողմից ընդունվել են բանաձևեր, որոնք վերահաստատում են դեռևս 2004թ. Հայոց ցեղասպանության ճանաչումը և պարտավորեցնում կառավարության ներկայացուցչին հինգ տարին մեկ՝ ապրիլի 24-ին ներկա գտնվել Երևանում ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառումներին: Այս առիթով ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդես է եկել [հայտարարությամբ](#):

**Մարտի 9-ին** Չեխիայի Թերեզին քաղաքում տեղի է ունեցել Թերեզինշտադտի Ցեղասպանությունների ուսումնասիրությունների կենտրոնին կից թանգարանի [բացումը](#), որն իր տեսակում առաջինն է Չեխիայի Հանրապետությունում: Նորաբաց թանգարանում ցուցադրված են նաև Հայոց ցեղասպանությանն առնչվող նյութեր:

**Ապրիլի 13-ին** Ժնևի Թրամբլե զբոսայգում [քացվել է](#) Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող «Հիշատակի Լապտերներ» հուշահամալիրը:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևեր շարունակվել են ընդունվել նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

**Ապրիլի 25-ին** Իսպանիայի Ալկորկոն քաղաքը պաշտոնապես ճանաչել և դատապարտել է Հայոց ցեղասպանությունը:

**Հոկտեմբեր 5-ին** Արգենտինայի Տուկուման նահանգի օրենսդիր մարմինը Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև է ընդունել:

**Նոյեմբերի 23-ին** Անգլիայի Դերբի քաղաքի խորհուրդը միաձայն ընդունել է Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևը:

Հայաստանի արտաքին քաղաքական գերակայությունների շարքում է եղել նաև կանխարգելման օրակարգի առաջմղումը:

**Մարտի 23-ին** Ժնևում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 37-րդ նստաշրջանում կոնսենսուսով ընդունվել է Հայաստանի նախաձեռնած՝ Ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ [բանաձևը](#) («Prevention of genocide»): Հայաստանին են միացել և բանաձևը համահեղինակել ավելի քան վեց տասնյակ պետություններ, որոնք ներկայացնում են Մարդու իրավունքների խորհրդի տարածաշրջանային բոլոր խմբերը: Բանաձևը վերահաստատել է ցեղասպանության դեմ պայքարի անհրաժեշտությունն ու այս հարցում միասնական ուժերով հանդես գալու կարևորությունը, շեշտադրելով ցեղասպանության կանխարգելման հարցում կրթության դերը:

**Սեպտեմբերի 13-ին** Ժնևում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 39-րդ նստաշրջանի շրջանակներում տեղի է ունեցել Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի ընդունման 70-ամյակին նվիրված բարձր մակարդակի քննարկում, որտեղ [քացման խոսքով](#) հանդես է եկել ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը:

**Դեկտեմբերի 9-11-ը** ՀՀ ԱԳՆ նախաձեռնությամբ և կազմակերպմամբ, ՄԱԿ-ի Ցեղասպանությունների կանխարգելման և պաշտպանելու պատասխանատվության գրասենյակի աջակցությամբ և Ցեղասպանագետների միջազգային ասոցացիայի հետ համագործակցությամբ Երևանում անցկացվել է «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» երրորդ գլոբալ [ֆորումը](#), որին մասնակցել են ցեղասպանության դեմ պայքարի ամենահայտնի կառույցները, համալսարանները, գիտական կենտրոններն ու թանգարանները ներկայացնող ցեղասպանագետները:

Երրորդ գլոբալ ֆորումն առանձնացել է նաև միջազգային կազմակերպությունների ներկայացվածությամբ, մասնավորապես, ֆորումի շրջանակներում առաջին անգամ Հայաստան են այցելել և զեկույցներով հանդես եկել Ցեղասպանության կանխարգելման հարցերով ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ խորհրդական Ադամա Դիենզը, Փոքրամասնությունների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող Ֆեռնան դե Վարենը, Զանգվածային ոճրագործությունների կանխարգելմանն ուղղված գլոբալ գործողության (GAAMAC) նախագահող Մո Բլիքերը և այլք:

## 4. ՌՌԻՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում շարունակվել են բոլոր ուղղություններով հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների և ռազմավարական գործընկերության հետագա ամրապնդմանն ու ընդլայնմանն ուղղված ջանքերը:

Տարին նշանավորվել է քաղաքական ակտիվ երկխոսությամբ, տարածաշրջանային և միջազգային հարթակներում շահերի արդյունավետ համադրմամբ, տարածաշրջանում խաղաղության և անվտանգության ապահովմանը, տնտեսական, էներգետիկ՝ ներառյալ ատոմային էներգիայի, տրանսպորտի, արտակարգ իրավիճակների, ապակենտրոնացված, գյուղատնտեսության, հումանիտար և այլ ոլորտներում համատեղ նախագծերի իրականացմանն ուղղված միասնական քայլերով:

Տարվա ընթացքում երկկողմ և բազմակողմ ձևաչափերով կայացել են Հայաստանի վարչապետի՝ Ռուսաստանի նախագահի ու վարչապետի հետ մի շարք հանդիպումներ ինչպես երկկողմ, այնպես էլ՝ բազմակողմ հարթակներում ([փետրվարի 2](#), [մայիսի 13-14](#), [հունիսի 13-14](#), [հուլիսի 26-27](#), [սեպտեմբերի 8](#), [դեկտեմբերի 6](#), [դեկտեմբերի 27](#)): Տեղի են ունեցել Հայաստանի նախագահի և վարչապետի աշխատանքային այցեր Մոսկվա (հունիսի 13-ին, սեպտեմբերի 8-ին և դեկտեմբերի 27-ին):

Տարվա ընթացքում Հայաստանի ու Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների միջև հանդիպումներ են ունեցել երկկողմ և բազմակողմ ձևաչափերով ([ապրիլի 26](#), Է.Նալբանդյան - Ս.Լավրով), ([հունիս 7](#), [սեպտեմբեր 26](#), [դեկտեմբերի 27](#)) (Զ.Մնացականյան - Ս.Լավրով):

Հայաստանի և Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև 2018-2019թթ. խորհրդակցությունների ծրագրի շրջանակներում անցկացվել են մի շարք խորհրդակցություններ, որոնք ընդգրկել են երկկողմ, տարածաշրջանային և միջազգային հարթակներում փոխգործակցությանն առնչվող հարցերի լայն շրջանակ: Քայլեր են ձեռնարկվել երկկողմ ռազմատեխնիկական համագործակցության զարգացման ուղղությամբ:

**Փետրվարի 20-ին** կայացել է հայ-ռուսական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 18-րդ նիստը, իսկ **հուլիսին՝** հանձնաժողովի համանախագահների հանդիպումը:

Ակտիվ գործակցություն է ծավալվել նաև խորհրդարանական հարթակում: Ազգային ժողովի նախագահի գլխավորած պատվիրակությունը [փետրվարին](#) Մոսկվայում հանդիպել է Ռուսաստանի Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահի և Պետական դումայի նախագահի գլխավորած

պատվիրակությունների հետ: Շարունակվել է ակտիվ համագործակցությունը երկու երկրների խորհրդարանների միջև գործող բարեկամության խմբերի միջև:

**Ինտենսիվ են եղել միջգերատեսչական և միջտարածաշրջանային կապերը:** Բազմաթիվ փոխայցելություններ են տեղի ունեցել տարբեր գերատեսչությունների ղեկավարների մակարդակով: Դրանց ընթացքում համագործակցության պայմանավորվածություններ են ձեռք բերվել քաղաքական, ռազմատեխնիկական, առևտրատնտեսական, էներգետիկ և այլ ոլորտներում:

**Սեպտեմբերի 8-ին** Մոսկվայում կայացել է հայ-ռուսական ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 13-րդ նիստը:

Շարունակաբար զարգացել է նաև միջտարածաշրջանային համագործակցությունը:

**Հունիսի 29-ին** Երևանում կայացել է հայ-ռուսական միջտարածաշրջանային 7-րդ համաժողովը: Ստորագրվել է Հայաստանի ու Ռուսաստանի կառավարությունների միջև միջտարածաշրջանային համագործակցության ծրագրի 2018-2021թթ. իրականացման միջոցառումների ծրագիրը:

Տարվա ընթացքում ստորագրվել են շուրջ երկու տասնյակ միջկառավարական, միջգերատեսչական և միջտարածաշրջանային իրավական փաստաթղթեր:

**Հուլիսի 24-ին**, գրեթե 60 տարվա ընդմիջումից հետո, Մոսկվայի Մեծ թատրոնի Պատմական բեմում ներկայացվել է Արամ Խաչատրյանի «Գայանե» բալետը: Ներկայացումը նվիրված էր Առաջին Հանրապետության 100 ամյակին և մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի 115-ամյա հոբելյանին:

## 5. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Հաշվետու տարվա ընթացքում հայ-ամերիկյան բարեկամական գործընկերության զարգացումը կարևոր տեղ է զբաղեցրել Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգում:

**Փետրվարի 9-ին** Հայաստանում է գտնվել ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Բրիջիթ Բրինքը, ով հանդիպել է ՀՀ [Նախագահ](#) Սերժ Սարգսյանի, [վարչապետ](#) Կարեն Կարապետյանի և ԱԳ [Նախարար](#) Էդվարդ Նալբանդյանի հետ:

**Մարտի 5-ին** ՀՀ ԱԳ Նախարար Է. Նալբանդյանն ընդունել է ԱՄՆ պետքարտուղարի՝ տնտեսական և բիզնեսի հարցերով գլխավոր [փոխտեղակալ](#) Բրայան ՄաքՖիթերսին:

**Մարտի 19-ին** Վաշինգտոնում՝ ԱՄՆ Առևտրային ներկայացուցչի գրասենյակում, տեղի է ունեցել Հայ-ամերիկյան առևտրի ու ներդրումների խորհրդի նիստը, որին հայկական պատվիրակության կազմում մասնակցել է ԱԳ Նախարարի տեղակալ Ռոբերտ Հարությունյանը:

**Ապրիլի 30-ին** ԱԳ [Նախարարի](#) պաշտոնկատար Էդվարդ Նալբանդյանը և **մայիսի 16-ին** ԱԳ նորանշանակ [Նախարար](#) Զոհրաբ Մնացականյանը հեռախոսազրույց են ունեցել ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի և Եվրասիայի հարցերով տեղակալ Ուեսս Միթչելի միջև, որոնց



ընթացքում քննարկվել են հայ-ամերիկյան հարաբերությունների օրակարգին առնչվող մի շարք հարցեր:

**Մայիսի 28-ին** ԱԳ [Նախարար](#) Զ.Մնացականյանն ընդունել է ԱՄՆ պետքարտուղարի՝ Եվրոպական և Եվրասիական հարցերով փոխտեղակալ Բրիջիթ Բրինքին: Քննարկվել է Հայաստանում տեղի ունեցած վերջին ներքաղաքական զարգացումները և հայ-ամերիկյան հարաբերությունների օրակարգային հարցերի լայն շրջանակ: Բ.Բրինքին ընդունել են նաև ՀՀ նախագահին ու վարչապետը:

**Հունիսի 27-ից հուլիսի 1-ը և հուլիսի 4-8-ը** Վաշինգտոնում՝ ամենամյա Սմիթսոնյան «Ֆոլքլայֆ» ծրագրի շրջանակներում կայացել է «Հայաստան. տուն արարելը» խորագրով մշակութային փառատոնը: Սմիթսոնյանն և իր հայաստանյան գործընկերները ներկայացրել են երկրի խոհանոցն ու արհեստագործությունը՝ Հայաստանից և սփյուռքից ժամանած ավելի քան 170 արհեստագործներ, երաժիշտներ, խոհարարներ, գինեգործներ և պարողներ օգնությամբ: Փառատոնի բացման արարողությանը ներկա էր Հայաստանի Հանրապետության [նախագահ](#) Արմեն Սարգսյանը:

**Հունիսի 29-ին** Վաշինգտոն կատարած աշխատանքային այցի շրջանակներում Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը հանդիպում է ունեցել ԱՄՆ [պետքարտուղար](#) Մայք Պոմպեյի հետ:

**Հոկտեմբերի 26-ին** Հայաստանում է գտնվել ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջոն Բոլթոնը, ով հանդիպումներ է ունեցել ՀՀ [վարչապետի](#) պաշտոնակատարի և բարձրաստիճան այլ պաշտոնյաների հետ:

**2018թ. սեպտեմբերի 23-ից 2019թ. հունվարի 13-ը** Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում անցկացվել է հայոց պատմությանը և մշակույթին նվիրված «Armenia!» ցուցադրությունը: Ցուցադրությանը ներկայացված է եղել 4-17-րդ դարերի հայկական մշակութային ժառանգությունը՝ ցուցադրելով աշխարհում ներկայացված 140 նմուշ: Սեպտեմբերի 25-ին թանգարան են այցելել [վարչապետ](#) Նիկոլ Փաշինյանը և Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը:

**Դեկտեմբերի 6-ին** Միլանում ընթացող ԵԱՀԿ 25-րդ նախարարական համաժողովի շրջանակներում տեղի է ունեցել Հայաստանի ԱԳ նախարարի պաշտոնակատար Զոհրաբ Մնացականյանի հանդիպումը ԱՄՆ [պետքարտուղարի](#) տեղակալ Ուեսս Միթչելի հետ:

## 6. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

2018թ. ընթացքում շարունակվել են ակտիվ քայլեր ձեռնարկվել Եվրոպական Միության հետ տարբեր ոլորտներում համագործակցության ընդլայնման ուղղությամբ:



## **Փոխայցելություններ**

**Փետրվարի 21-ին** ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանն աշխատանքային այց է կատարել Բրյուսել, որի շրջանակներում հանդիպումներ է ունեցել ԵՄ բարձր [ներկայացուցիչ](#) Ֆեդերիկա Մոգերինիի, Եվրոպական խորհրդարանի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Դևիդ ՄքԱլլիսթերիի հետ, ինչպես նաև ստորագրվել է «ՀՀ-ԵՄ Գործընկերության առաջնություններ» փաստաթղթի հաստատման մասին որոշումը:

**Մայիսի 29-ին** Հարավային Կովկասի և Վրաստանում ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ [ներկայացուցիչ](#) Տոյվո Կլաարն այցելել է Երևան: Նրան ընդունել են ՀՀ նախագահը, վարչապետը, ԱԳ և պաշտպանության նախարարները: Զոհրաբ Մնացականյանը հանդիպել է Տոյվո Կլաարին նաև **դեկտեմբերի 6-ին** Միլանում ԵԱՀԿ արտգործնախարարների 25-րդ խորհրդի շրջանակներում:

**Հունիսի 18-ին** Եվրոպական խորհրդարանի [պատվիրակությունը](#)՝ արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Դևիդ ՄքԱլլիսթերի գլխավորությամբ այցելել է Երևան: Պատվիրակությանն ընդունել են ՀՀ վարչապետը, ԱԺ նախագահը, ԱԳ և արդարադատության նախարարները:

**Հունիսի 19-21-ը** ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը կատարել է աշխատանքային այց Բրյուսել: [Նախարարը](#) հանդիպումներ է ունեցել ԵՄ բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիի, հանձնակատարներ Յոհաննես Հանի և Դիմիտրիս Ավրամոպուլոսի հետ:

**Հուլիսի 11-12-ը** ՀՀ [վարչապետ](#) Նիկոլ Փաշինյանն աշխատանքային այցով գտնվել է Բրյուսելում: Հանդիպումներ են կայացել Եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի, Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժան-Կլոդ Յունկերի և ԵՄ Բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիի հետ:

**Հոկտեմբերի 17-18-ը** ԵՄ արտաքին գործողության եվրոպական ծառայության՝ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հարցերով կառավարող տնօրեն Թոմաս-Մայր Հարթինգի գլխավորած [պատվիրակությունն](#) այցելել է Երևան: Պատվիրակությանն ընդունել են ՀՀ վարչապետը, փոխվարչապետը, ԱԳ նախարարը, ոլորտային նախարարները:

**Դեկտեմբերի 4-ին** ՀՀ ԱԳ նախարարի պաշտոնակատար Զոհրաբ Մնացականյանն աշխատանքային այց է կատարել Բրյուսել: Հանդիպումներ են կայացել ԵՄ բարձր [ներկայացուցիչ](#) Ֆեդերիկա Մոգերինիի և Եվրոպական խորհրդարանի արտաքին գործերի հանձնաժողովի [նախագահ](#) Դևիդ ՄքԱլլիսթերի հետ:

## **ՀԸԳՀ կանոնադրային մարմինների նիստեր**

**Հունիսի 21-ին** Բրյուսելում կայացել է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (ՀԸԳՀ) նախատեսված ՀՀ-ԵՄ բարձրագույն քաղաքական մարմնի՝ Գործընկերության խորհրդի անդրանիկ [նիստը](#), որին մասնակցող ՀՀ պատվիրակությունը ղեկավարում էր ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը:

**Նոյեմբերի 27-ին** ՀՀ ԱԳՆ-ում տեղի է ունեցել ՀՀ-ԵՄ Գործընկերության կոմիտեի անդրանիկ [նիստը](#): ԵՄ վերահաստատել է իր աջակցությունը ՀՀ կառավարության բարեփոխումների գործընթացին և հավանության արժանացրել ՀԸԳՀ կիրարկման ճանապարհային քարտեզի նախագիծը:

### **ՀԸԳՀ կիրարկում**

**Ապրիլի 11-ին** ՀՀ ԱԺ կողմից միաձայն [վավերացվել](#) է ՀԸԳՀ, որի ժամանակավոր կիրարկումը մեկնարկել է հունիսի 1-ից:

**Հուլիսի 2-ին** ՀՀ վարչապետի [որոշմամբ](#) վերակազմավորվել է ՀԸԳՀ և «Գործընկերության առաջնություններ» փաստաթղթի կիրարկումն ապահովող Միջգերատեսչական հանձնաժողովը՝ համակարգելով ՀԸԳՀ կիրարկման ճանապարհային քարտեզի կազմման գործընթացը:

**Հոկտեմբերի 2-ին** ՀՀ ԱԳՆ-ում տեղի է ունեցել Հայաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և ՀՀ կառավարության բարձրաստիճան անդամների՝ ՀԸԳՀ կիրարկմանը նվիրված հերթական [հանդիպումը](#)՝ ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի մասնակցությամբ և ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի նախագահությամբ:

**Նոյեմբերի 27-ին** Երևանում ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Կարեն Նազարյանի և Եվրոպական արտաքին գործողության ծառայության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հարցերով կառավարող տնօրեն տեղակալ Լյուկ Դեկինի նախագահությամբ տեղի է ունեցել ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (ՀԸԳՀ) նախատեսված Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության Գործընկերության կոմիտեի անդրանիկ [նիստը](#):

### **ՀՀ և Արևելյան գործընկերություն**

**Հոկտեմբերի 15-ին** ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը Լյուքսեմբուրգում մասնակցել է Արևելյան գործընկերության (ԱԼԳ) ԱԳ նախարարների [հանդիպմանը](#)՝ նվիրված ԱԼԳ 10-ամյակի նշանավորման ձևաչափի և «20 արդյունք մինչև 2020թ.» փաստաթղթի կիրարկման քննարկմանը:

**Դեկտեմբերի 11-ին** ՀՀ ԱԳ նախարարի պաշտոնակատար Զոհրաբ Մնացականյանը, որպես հրավիրյալ բանախոս, ելույթ է ունեցել Թբիլիսիում կայացած ԱԼԳ Քաղաքացիական հասարակության ֆորումի 10-րդ տարեկան [վեհաժողովին](#):

## **7. ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐ**

2018թ. Իրանի և Վրաստանի հետ շարունակվել են ամենատարբեր ոլորտներում անմիջական հարևաններին հատուկ սերտ համագործակցություն և աշխարհաքաղաքական ազդեցություններից հնարավորինս զերծ հարաբերություններ զարգացնելու ուղղությամբ աշխատանքները:

## 7.1. Վրաստան

2018թ. հայ-վրացական բարիդրացիական հարաբերությունները շարունակել են զարգանալ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում՝ տրանսպորտ, էներգետիկա, զբոսաշրջություն, գյուղատնտեսություն և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում երկու պետությունների միջև պարբերաբար իրականացվել են տարբեր մակարդակների պաշտոնական և աշխատանքային փոխայցելություններ, այդ թվում՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի ([մայիսի 30-31](#)), ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի ([դեկտեմբերի 16](#)), Զոհրաբ Մնացականյանի ([դեկտեմբերի 11-12](#)) այցելությունները Վրաստան, ինչպես նաև Վրաստանի վարչապետեր Գիորգի Կվիրիկաշվիլի ([մարտի 2](#)) և Մամուկա Բախտաձեի ([սեպտեմբերի 10](#)) այցելությունները Հայաստան:

Տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ ԱԳՆ-ների ոլորտային գերատեսչությունների միջև ([սեպտեմբերի 10](#), [դեկտեմբերի 25](#)):

Շարունակվել են ակտիվ շփումները գերատեսչությունների ղեկավարների մակարդակով:

## 7.2. Իրանի Իսլամական Հանրապետություն

2018թ. շարունակվել են ջանքեր գործադրվել՝ ուղղված ԻԻՀ հետ բարիդրացիական փոխշահավետ համագործակցության խորացմանը:

**Փետրվարի 1-4-ը** Թեհրանում կայացել է Ասիական քաղաքական կուսակցությունների միջազգային համաժողովի /ICAPP/ մշտական հանձնաժողովի 29-րդ նիստը և Մետաքսի ճանապարհին նվիրված ICAPP-ի 2-րդ հատուկ համաժողովը:

**Փետրվարի 26-27-ը** Երևանում անցկացվել է հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի հերթական՝ 15-րդ համատեղ նիստը, որի ավարտին ստորագրվել է չորս փաստաթուղթ: Նիստի շրջանակներում Երևան է ժամանել ԻԻՀ էներգետիկայի նախարար Ռեզա Արդաքանիանը:

**Մարտի 4-6-ը** Թեհրանում կայացել է գյուղատնտեսության բնագավառում համագործակցության հայ-իրանական աշխատանքային խմբի առաջին հանդիպումը:

**Հուլիսի 9-ին** Երևան է ժամանել ԻԻՀ նախագահի հատուկ բանագնաց, ԻԻՀ էներգետիկայի նախարար, հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի իրանական կողմի [նախագահ](#) Ռեզա Արդաքանիանը: Նա հանդիպումներ է ունեցել ՀՀ վարչապետի, նախագահի և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի հետ:

**Հուլիսի 17-18-ը** Թեհրանում տեղի է ունեցել ՀՀ և ԻԻՀ ԱԳՆ-ների հյուպատոսական 12-րդ [նիստը](#): Նիստի ավարտին ստորագրվել է ՀՀ և ԻԻՀ ԱԳՆ-ների միջև հյուպատոսական 12-րդ համատեղ նիստի փոխըմբռնման հուշագիրը:

**Օգոստոսի 10-ին** ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների [նախարար](#), հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Արթուր Գրիգորյանն ընդունել է ԻԻՀ էներգետիկայի նախարարի տեղակալ Հոմայուն Հաերիի գլխավորած պատվիրակությանը: Զրուցակիցները քննարկել են Հայաստանի և Իրանի համար փոխշահավետ ենթակառուցվածքային ծրագրերի ընթացքն ու ներդրումային նախագծերի հնարավորությունները:

**Օգոստոսի 29-ից սեպտեմբերի 2-ը** Երևանում են գտնվել Իրանի Իսլամական Հանրապետության Մեջլիսի Իրան-Հայաստան պատգամավորական բարեկամական խմբի անդամները:

**Սեպտեմբերի 26-ին** վարչապետ Նիկոլ Փաշինյանը Նյու Յորքում հանդիպում է ունեցել Իրանի [նախագահ](#) Հասան Ռոհանիի հետ, որի ընթացքում քննարկել են հայ-իրանական հարաբերությունների օրակարգային տարբեր հարցեր: Զրուցակիցները կարևորել են տնտեսական համագործակցության զարգացումը և նշել, որ այն զգալիորեն զիջում է երկկողմ քաղաքական հարաբերությունների մակարդակին՝ անհրաժեշտ համարելով գործուն քայլերի ձեռնարկումը՝ առևտրատնտեսական կապերի խթանման, առկա ներուժի իրացման նպատակով:

Հաշվետու տարում կայացել են նաև տարբեր գերատեսչությունների ղեկավարների մակարդակով հանդիպումներ:

Կապված Իրանի դեմ կիրառվող պատժամիջոցների հետ ԱԳՆ նշել է, որ մշտական կապի մեջ է գործընթացում ներգրավված բոլոր կողմերի հետ, իսկ հայկական կողմին հուզող բոլոր հարցերը և մտահոգությունները հստակորեն ներկայացվում են՝ միաժամանակ ընդգծելով, որ ՀՀ-ի համար ԻԻՀ-ի հետ ավանդական, բարիդրացիական հարաբերությունները կենսական նշանակություն ունեն:

### 7.3. Թուրքիա

Թուրքիայի Հանրապետության ապակառուցողական դիրքորոշման պատճառով ընթացիկ տարում հայ-թուրքական հարաբերությունների ոլորտում որևէ դրական տեղաշարժ չի դիտվել:

**Մարտի 1-ին** ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի [հրամանագրով](#) դադարեցվել է «Հայաստանի հանրապետության և Թուրքիայի հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի հանրապետության և Թուրքիայի հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունների կնքման ընթացակարգը: Այս մասին նախագահ Սերժ Սարգսյանի կողմից հայտարարվել էր դեռևս **հունվարի 24-ին**՝ ԵԽԽՎ լիազումար նիստում:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը տարբեր առիթներով հայտնել է, որ Հայաստանը պատրաստ է առանց նախապայմանների հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը: Անդրադառնալով Թուրքիայի կողմից երկկողմ հարաբերությունների կարգավորման համար ԼՂ հարցի՝ հոգուտ Ադրբեջանի լուծելու նախապայմանին, ՀՀ վարչապետը նշել է, որ որևէ մեկը չի կարող

հայ ժողովրդին հարկադրանքի և սպառնալիքի ճանապարհով մղել ԼՂ հարցի կարգավորման այս կամ այն տարբերակին:

## 8. ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ

Հաշվետու տարում քայլեր են ձեռնարկվել ԱՊՀ երկրների հետ տարբեր բնագավառներում համագործակցության զարգացման ուղղությամբ:

### **Բելառուս**

**Փետրվարի 2-ին** Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի շրջանակներում ՀՀ [վարչապետ](#) Կարեն Կարապետյանն Ալմաթիում հանդիպել է Բելառուսի վարչապետ Անդրեյ Կոբյակովի հետ:

**Մայիսի 14-ին՝** Սոչիում անցկացված Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստի շրջանակներում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպել է Բելառուսի [նախագահի](#) հետ, իսկ **հոկտեմբերի 30-ին** Մինսկում անցկացված Մյունխենի անվտանգության համաժողովի հիմնական խմբի հանդիպման շրջանակում կայացել է նաև Հայաստանի ու Բելառուսի [նախագահների](#) հանդիպումը:

**Հունիսի 11-ին** լրացել է Հայաստանի և Բելառուսի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակը:

**Հունիսի 22-ին** Մինսկում Արևելյան գործընկերության ձևաչափով արտգործնախարարների ոչ պաշտոնական հանդիպման շրջանակներում [նախարարներ](#) Մնացականյանի ու Մակեյի հանդիպման ժամանակ շեշտվել է գործընկերության ոգով հարաբերությունների ընդլայնման ու խորացման կարևորությունը:

### **Ուկրաինա**

Ձեռնարկվել են քայլեր Հայաստանի և Ուկրաինայի միջև հարաբերությունների խորացման ու զարգացման ուղղությամբ:

**Հոկտեմբերի 18-ին** Երևանում տեղի են ունեցել քաղաքական [խորհրդակցություններ](#) Հայաստանի և Ուկրաինայի արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև՝ փոխնախարարների մակարդակով:

### **Մոլդովա**

Տարվա ընթացքում ուշադրություն է դարձվել երկկողմ ու բազմակողմ ձևաչափերում հայ-մոլդովական միջպետական երկխոսության աշխուժացմանը:

Կայացել են Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Մոլդովայի նախագահ Իգոր Դոդոնի ([մայիսի 14](#)), Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի և Մոլդովայի նախագահ Իգոր Դոդոնի

([հոկտեմբերի 11](#)), երկու երկրների ԱԳ նախարարներ Զոհրաբ Մնացականյանի և Տուդոր Ուլյանովսկիի ([հոկտեմբերի 9](#)) հանդիպումները:

### **Ղազախստան**

**Սեպտեմբերի 27-ին** Նյու Յորքում տեղի է ունեցել Հայաստանի և Ղազախստանի [արտգործնախարարների](#) հանդիպումը, որի ժամանակ անդրադարձ է կատարվել երկկողմ և բազմակողմ ձևաչափերով փոխգործակցությանը, նախանշվել են դրա առավել խորացմանն ուղղված համատեղ քայլերը:

ԱՊՀ մասնակից պետությունների ղեկավարների խորհրդի նիստի շրջանակում [սեպտեմբերի 28-ին](#) Դուշանբեում կայացել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի ու Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևի հանդիպումը: Հանդիպումների ընթացքում, ի թիվս երկկողմ օրակարգի այլ հարցերի, երկուստեք կարևորվել է հայ-ղազախական տնտեսական հարաբերությունների հետագա զարգացումն ու ընդլայնումը:

### **Ղրղզստան**

2018թ. լրացել է Հայաստանի և Ղրղզստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակը:

**Մայիսի 14-ին** Սոջիում կայացած Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստի շրջանակներում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը երկկողմ հանդիպում է ունեցել Ղրղզստանի [նախագահ](#) Սոորոնբայ Ժենենբեկովի հետ, որի ընթացքում քննարկվել են հայ-ղրղզական համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր:

**Նոյեմբերի 7-ին** Աստանայում անցկացված ՀԱՊԿ ձևաչափով միջոցառումների շրջանակում կայացել է Հայաստանի ու Ղրղզստանի [արտգործնախարարների](#) հանդիպումը, որի ժամանակ արձարծվել են երկկողմ իրավապայմանագրային դաշտի ընդլայնմանը, առևտրատնտեսական կապերի աշխուժացմանը, միջազգային հարթակներում փոխգործակցությանն առնչվող հարցեր:

### **Տաջիկստան**

Հայ-տաջիկական հարաբերությունների զարգացման ու խորացման հարցերը քննարկվել են **սեպտեմբերի 27-ին** Դուշանբեում ԱՊՀ ձևաչափով գագաթաժողովի շրջանակներում անցկացված վարչապետ Փաշինյանի ու [նախագահ](#) Ռահմոնի, ինչպես նաև **հունիսի 1-ին** ԱՊՀ Կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստի շրջանակներում կայացած ՀՀ առաջին փոխվարչապետի և Տաջիկստանի վարչապետի հանդիպումների ժամանակ:

Տարվա ընթացքում ջանքեր են գործադրվել հայ-թուրքմենական, հայ-ուզբեկական հարաբերությունների աշխուժացման ու զարգացման ուղղությամբ:

## **9. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ**

Եվրոպական երկրների հետ համագործակցության խորացումն ու զարգացումը շարունակել են հանդիսանալ որպես ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր ուղղություն, որին նպաստել է նաև **հունիսի 1-ից** մեկնարկած ՀԸԳՀ ժամանակավոր կիրարկումը՝ հանդիսանալով ինչպես ՀՀ-ԵՄ, այնպես էլ՝ ԵՄ անդամ պետությունների հետ երկկողմ ձևաչափով համագործակցության ընդլայնման արդյունավետ գործիք:

Նախագահ Սերժ Սարգսյանն աշխատանքային այցեր է կատարել Ֆրանսիա ([հունվարի 22](#)), Գերմանիա ([փետրվարի 16-18](#))՝ Մյունխենի անվտանգության համաժողովին մասնակցելու նպատակով): Նախագահ Սերժ Սարգսյանն [ապրիլի 5-ին](#) պաշտոնական այց է կատարել Սուրբ Աթոռ, աշխատանքային այց Իտալիա և Մալթայի Ինքնիշխան Մարտական ուխտ:

Երևան են ժամանել Բուլղարիայի նախագահ Ռոմեն Ռադևը ([փետրվարի 11-13-ը](#), պետական այց), Իտալիայի նախագահ Սերջիո Մատարելան ([հուլիսի 30-31-ը](#)), Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը ([օգոստոսի 24-25-ը](#), պաշտոնական այց):

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ) 17-րդ [գագաթաժողովի](#) շրջանակում **հոկտեմբերի 11-12-ին** Հայաստան են ժամանել Ֆրանսիայի, Էստոնիայի, Շվեյցարիայի, Բելգիայի և եվրոպական մի շարք այլ երկրների ղեկավարներ:

Նախագահ Արմեն Սարգսյանը պաշտոնական այց է կատարել Գերմանիա ([նոյեմբերի 27-29](#)), աշխատանքային այցեր՝ Ֆրանսիա ([նոյեմբերի 12-13](#)) և Իտալիա ([նոյեմբերի 14](#)):

**Հունվարի 23-26-ին** Դավոսում կայացած միջազգային տնտեսական համաժողովի շրջանակներում վարչապետ Կարեն Կարապետյանը հանդիպում է ունեցել Նիդերլանդների Թագավորության [վարչապետ](#) Մարկ Ռուտեի, Էստոնիայի Հանրապետության [վարչապետ](#) Յուրի Ռատասի և Շվեյցարիայի Ազգային խորհրդի [նախագահ](#) Դոմինիկ դե Բուամանի հետ:

**Փետրվարի 5-8-ը** Հայաստան է այցելել Շվեյցարիայի Ազգային խորհրդի նախագահ Դոմինիկ դե Բուամանը:

**Մարտի 12-13-ը** ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը պաշտոնական այց է կատարել [Շվեդիա](#), իսկ **մարտի 14-ին՝ Դանիա:**

**Մայիսի 21-24-ը** Կիպրոսի Հանրապետության ներկայացուցիչների պալատի [նախագահ](#) Դեմետրիս Սիլուրիսը ժամանել է Հայաստան:

**Ապրիլի 9-ին** Հայաստան է այցելել Միացյալ Թագավորության Եվրոպայի և Ամերիկաների հարցերով [պետնախարար](#) Ալեն Դանքնը:

**Մայիսի 28-ին** Երևան է ժամանել Ֆրանսիայի Եվրոպայի և արտաքին գործերի [նախարար](#) Ժան-Իվ Լը Դրիանը:

**Հունիսի 28-29-ը** ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը պաշտոնական [այց](#) է կատարել Գերմանիա:

**Հուլիսի 11-ին** վարչապետ Նիկոլ Փաշինյանն աշխատանքային այց է կատարել Բելգիա: Բրյուսելում՝ ՆԱՏՕ-ի գագաթաժողովի շրջանակներում, վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում է ունեցել Ֆրանսիայի [նախագահ](#) Էմանուել Մակրոնի հետ:



**Հուլիսի 31-ին** կայացել է ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի հանդիպումը Իտալիայի նախագահի պատվիրակության կազմում Հայաստան ժամանած ԱԳ և միջազգային համագործակցության նախարար Էնցո Միլանեզիի [հետ](#):

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը **սեպտեմբերի 13-14-ը, հոկտեմբերի 5-ին, նոյեմբերի 11-ին** աշխատանքային այցեր է կատարել Ֆրանսիա:

ՄԱԿ-ի ԳԱ 73-րդ նստաշրջանի շրջանակներում վարչապետ Նիկոլ Փաշինյանը **սեպտեմբերի 24-ին** հանդիպում է ունեցել Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադիեի [հետ](#):

**Նոյեմբերի 11-ին** ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը [մասնակցել](#) է Առաջին աշխարհամարտում կնքված զինադադարի 100-ամյակին նվիրված արարողությանը և «Փարիզի խաղաղության համաժողովի» աշխատանքներին:

**Դեկտեմբերի 4-ին** ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը [այցելել](#) է Բելգիա:

Աժ նախագահ Արա Բաբոյանը այցեր է իրականացնել Չեխիա (**օգոստոսի 22-24**) և Շվեյցարիա (**սեպտեմբերի 27-28**):

Միջազգային համաժողովների շրջանակներում կայացել են ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի հանդիպումները Ռումինիայի ([սեպտեմբերի 26](#), Նյու Յորք), Ֆրանսիայի ([սեպտեմբերի 27](#), Նյու Յորք), Էստոնիայի ([սեպտեմբերի 27](#), Նյու Յորք, դեկտեմբեր 6, Միլան), Հունաստանի ([սեպտեմբերի 27](#), Նյու Յորք), Ֆինլանդիայի ([սեպտեմբերի 28](#), Նյու Յորք), Կոսովոյի ([սեպտեմբերի 28](#), Նյու Յորք, հոկտեմբերի 9, Երևան), Սլովակիայի ([սեպտեմբերի 28](#), Նյու Յորք, դեկտեմբերի 7, Միլան), Լիտվայի ([հոկտեմբեր 8](#), Երևան), Մակեդոնիայի ([հոկտեմբերի 9](#), Երևան), Իռլանդիայի ([հոկտեմբերի 11](#), Երևան), Սերբիայի ([հոկտեմբերի 12](#), Երևան), Ավստրիայի ([դեկտեմբերի 5](#), Միլան), Դանիայի (դեկտեմբերի 6, Միլան), Մալթայի ([դեկտեմբերի 6](#), Միլան), Սուրբ Աթոռի ([դեկտեմբերի 7](#), Միլան), Լեհաստանի ([դեկտեմբերի 6](#), Միլան), Չեխիայի ([դեկտեմբերի 6](#), Միլան), Չեռնոգորիայի ([դեկտեմբերի 6](#), Միլան), Իսպանիա ([դեկտեմբերի 7](#), Միլան) արտաքին գերատեսչությունների ղեկավարների հետ:

Քաղաքական խորհրդակցություններ են անցկացվել Խորվաթիայի (փետրվարի 9, Երևան), Իտալիայի (փետրվարի 23, Հռոմ), Հունաստանի (մարտի 15, Երևան), Լատվիայի (մայիսի 30, Ռիգա), Լիտվայի (մայիսի 31, Վիլնյուս), Էստոնիայի (հունիսի 11, Երևան), Ռումինիայի (հուլիսի 17, Բուխարեստ), Շվեյցարիայի (հոկտեմբերի 9, Երևան), Ավստրիայի (նոյեմբերի 8, Երևան), Սլովակիայի (նոյեմբերի 21, Երևան), Հունաստանի (դեկտեմբեր 17, Աթենք) արտաքին քաղաքական գերատեսչությունների հետ:

**Փետրվարի 19-20-ը** Վարչապայում կայացել են հայ-լեհական, իսկ **դեկտեմբերի 19-ին**, Պրահայում՝ հայ-չեխական միջկառավարական հանձնաժողովի նիստերը:



## 10. ԱՍԻԱԿԱՆ-ԽԱՂԱՂՕՎԿԻԱՆՈՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

2018թ. ընթացքում հետևողական քայլեր են ձեռնարկվել Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանների պետությունների հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ:

ՀՀ ԱԳՆ նախաձեռնությամբ **մարտի 6-ին** ՀՀ կառավարությունն **Ավստրալական Միության, Նոր Զելանդիայի, Սինգապուրի Հանրապետության և Կորեայի Հանրապետության** քաղաքացիներին միակողմանիորեն ազատել է ՀՀ մուտքի արտոնագիր ձեռք բերելու պահանջից, ինչն ուժի մեջ է մտել մարտի 19-ին:

**Չինաստանի** հետ ակտիվ են եղել քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում (անվտանգության, պաշտպանության, զբոսաշրջության, քաղաքացիայի, տեղական ինքնակառավարման, կրթության) միջգերատեսչական փոխայցելություններն ու հանդիպումները:

**Օգոստոսի 22-ին** կայացել է Երևանում չինարենի խորացված ուսուցմամբ Հայ-չինական բարեկամության դպրոցի բացման արարողությունը:

**Սեպտեմբերի 30-ին** Նյու-Յորքում ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հանդիպում է ունեցել ԶԺՀ ԱԳ [նախարար](#) Վանգ Յիի հետ:

**Սեպտեմբերի 14-ին** Պեկինում անցկացվել են ՀՀ և ԶԺՀ արտաքին գործերի նախարարությունների միջև հերթական քաղաքական [խորհրդակցությունները](#), որոնց մասնակցել է ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Արմեն Պապիկյանի գլխավորած պատվիրակությունը:

**Սեպտեմբերի 14-16-ը** ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահ Տաթևիկ Ռևազյանը մասնակցել է Չինաստանի Կուանգճոու քաղաքում կայացած «Աշխարհի ուղիներ 2018» (World Routes) [միջոցառմանը](#): Միջոցառման շրջանակներում ստորագրվել է ԶԺՀ և ՀՀ միջև միջև օդային հաղորդակցությունների մասին համաձայնագիրը, ԶԺՀ մի շարք ավիաընկերությունների հետ քննարկվել են Հայաստան-Չինաստան ուղիղ օդային կապի հաստատմանն առնչվող խնդիրներ:

**Հոկտեմբերի 5-ին** Երևանում կայացել է ԶԺՀ կառավարության տեխնիկատնտեսական համագործակցության ծրագրի շրջանակներում Հայաստանին որպես նվիրատվություն՝ 200 շտապ օգնության ավտոմեքենայի հանձնման արարողությունը:

2018թ. ընթացքում, նախորդ տարվա համեմատ, 90%-ով ավելացել է են Չինաստանից Հայաստան զբոսաշրջիկների ներհոսքը:

**Փետրվարի 14-ին** ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և **Ճապոնիայի** կառավարության միջև ներդրումների ազատականացման, խրախուսման և պաշտպանության մասին» [համաձայնագիրը](#):

**Փետրվարի 16-ին** աշխատանքային այցով ՀՀ-ում էր գտնվում **Ճապոնիայի** արտաքին գործերի նախարարի խորհրդարանական հարցերով տեղակալ Մանաբու Հորիին:

**Փետրվարի 16-ին** տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության և **Ճապոնիայի** կառավարության միջև «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի՝ հնագիտական գտածոների վերականգնման և պահպանման համար սարքավորումների

բարելավման ծրագրի» հայտագրերի փոխանակման և դրամաշնորհի համաձայնագրի ստորագրման արարողությունը:

**Սեպտեմբերի 2-4-ը** տեղի է ունեցել **Ճապոնիայի ԱԳ նախարար** Տարո Կոնոյի այցը Հայաստան, որը Ճապոնիայի ԱԳ նախարարի՝ երբևէ Հայաստան կատարած առաջին այցն էր:

**Հուլիսի 26-30-ը** Հայաստան է այցելել **Ինդոնեզիայի Հանրապետության** Ժողովրդական խորհրդատվական ժողովի փոխնախագահ Հ. Մահյուդինի գլխավորած [պատվիրակությունը](#):

**Սեպտեմբերի 26-ին** Նյու Յորքում ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը և **Կիրիբատիի** նախագահ, արտաքին գործերի և միգրացիայի նախարար Թանեթի Մաամաուն ստորագրել են դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ [արձանագրություն](#):

**Սեպտեմբերի 27-ին** ԱԳ նախարարներ Զոհրաբ Մնացականյանն ու **Կամբոջայի** Պրակ Սոկհոնը ստորագրել են Հայաստանի արտաքին գործերի նախարարության և Կամբոջայի արտաքին գործերի և միջազգային համագործակցության նախարարության միջև քաղաքական խորհրդակցություններ անցկացնելու մասին փոխըմբռնման [հուշագիր](#):

**Սեպտեմբերի 28-ին** ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 73-րդ նստաշրջանի շրջանակներում ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հանդիպել է **Մոնղոլիայի ԱԳ նախարար** Դամդին Ցոգթբաաթարի հետ: Զոհրաբ Մնացականյանն ու Դամդին Ցոգթբաաթարը ստորագրել են «Հայաստանի Հանրապետության և Մոնղոլիայի միջև դիվանագիտական և ծառայողական անձնագրեր ունեցող անձանց համար մուտքի արտոնագրի վերացման մասին համաձայնագիրը»:

**Սեպտեմբերի 26-28-ը** ԱԳ Զոհրաբ Մնացականյանը Նյու Յորքում ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 73-րդ նստաշրջանի աշխատանքների շրջանակներում հանդիպումներ է ունեցել **Վանուատուի** արտաքին գործերի և առևտրի [նախարար](#) Ռալֆ Ռեգենվանուի և **Հնդկաստանի ԱԳ նախարար** Սուշմա Սուարաջի հետ:

**Հոկտեմբերի 17-20-ը** աշխատանքային այցով Հայաստան է այցելել **Վիետնամի** Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի արտաքին հարաբերությունների բաժնի պետի տեղակալ Նգույեն Տուան Ֆոնգը:

**Հոկտեմբերի 19-ին** ԱԳ նախարարի պաշտոնակատար Զոհրաբ Մնացականյանը և ՀՀ-ում **Կորեայի Հանրապետության** դեսպան Ու Յուն-Գընը (նստավայրը՝ Մոսկվա) ԱԳՆ-ում ստորագրել են «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կորեայի Հանրապետության կառավարության միջև Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» [համաձայնագիրը](#):

**Հոկտեմբերի 24-ին** ԱԳ նախարարի տեղակալ Արմեն Պապիկյանը հանդիպել է **Սինգապուրի** առևտրի և արդյունաբերության ավագ պետնախարար Պո Կուն Կոյի գլխավորած [պատվիրակությանը](#):

## 11. ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունը շարունակել է քայլեր ձեռնարկել Մերձավոր և Միջին Արևելքի ավանդական բարեկամ պետությունների հետ տարբեր ոլորտներում համագործակցությունը զարգացնելու ուղղությամբ:

**Լիբանանի** հետ հարաբերությունները նշանավորվել են բարձրաստիճան փոխայցելություններով:

**Փետրվարի 21-22-ը** Հայաստան պաշտոնական այց է կատարել Լիբանանի Հանրապետության [նախագահ](#) Միշել Աունը: Նա հանդիպել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի, վարչապետ Կարեն Կարապետյանի, Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանի, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդի հետ:

**Մարտի 12-13-ը** ՀՀ [վարչապետ](#) Կարեն Կարապետյանը պաշտոնական այց է կատարել Լիբանան:

**Մարտի 15-ին** Էդվարդ Նալբանդյանը Հռոմում մասնակցել է Լիբանանի աջակցությանը նվիրված բարձրաստիճան միջազգային համաժողովին:

**Հոկտեմբերի 20-21-ը** ՀՀ [վարչապետի](#) պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանն աշխատանքային այց է կատարել Լիբանանի Հանրապետություն, հանդիպումներ անցկացրել Լիբանանի նախագահի, վարչապետի, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինի հետ:

**Հունվարի 24-ին** Դավոսում Համաշխարհային տնտեսական համաժողովի շրջանակներում տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի և **Իրաքի Քուրդիստանի** [վարչապետ](#) Նեշիրվան Բարզանիի հանդիպումը:

**Փետրվարի 17-ին** Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակներում տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի և **Եգիպտոսի** Արաբական Հանրապետության ԱԳ [նախարար](#) Սամեհ Շուքրիի հանդիպումը:

**Սեպտեմբերի 24-27-ը** Նյու Յորքում, ՄԱԿ-ի ԳԱ 73-րդ նստաշրջանի շրջանակներում կայացել են ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի հանդիպումները **Թունիսի** ԱԳ [նախարար](#) Խեմայիս Զհինավիի, **Արաբական Միացյալ Էմիրությունների** արտաքին գործերի և միջազգային համագործակցության [նախարար](#) Շեյխ Աբդալլահ բին Զայեդ Ալ Նահայանի, **Ալժիրի** ԱԳ [նախարար](#) Աբդ Էլ-Կադեր Մուսահիլի, **Քուվեյթի** ԱԳ [նախարար](#) Սաբահ Ալ-Խալիդ Ալ Սաբահի հետ:

Երկար տարիներ պատերազմական գործողությունների պատճառով տարբեր կացարաններում ապաստանած և երբևէ գործունեությունը չդադարեցրած միակ դիվանագիտական ներկայացուցչությունը՝ **Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոսությունը**, հունվարին վերադարձել է իր հիմնական նստավայր: Տեղի է ունեցել Գլխավոր հյուպատոսության շենքի վերաբացումը:

**Հուլիսին** Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոսությունը համակարգել է հայ-ռուսական մարդասիրական կենտրոնի կողմից Հալեպ առաքված մարդասիրական օգնության ստացումը, Լաթաքիայից Հալեպ տեղափոխումը և բաշխման աշխատանքները:

**Փետրվարի 11-17-ը** իսրայել է այցելել ՀՀ ԱԺ Հայաստան-Իսրայել բարեկամական խմբի ղեկավար Գագիկ Մինասյանի գլխավորած պատվիրակությունը:

**Օգոստոսի 21-ից 22-ը** Հայաստանի և **Իսրայելի** արտաքին գերատեսչությունների միջև երևանում անցկացվել են քաղաքական [խորհրդակցություններ](#):

**Փետրվարի 15-ին** Հայաստան է այցելել **Քուվեյթի** սոցիալական հարցերի և աշխատանքի նախարար, տնտեսական հարցերով պետնախարար տիկին Հինդ Սաբիհ Ալ-Սաբիհին:

**Հոկտեմբերի 11-12-ը** Երևանում կայացած Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթաժողովին մասնակցել են **Թունիսի** նախագահ Բեժի Կաիդ Էլ Սեբսիի, **Լիբանանի** նախագահ Միշել Աունի, **Մարոկկոյի** ԱԳ նախարար Նասեր Բուրիտայի, **Արաբական Միացյալ Էմիրությունների** պետնախարար Զաքի Նուսեյբայի, **Մավրիտանիայի** ԱԳ նախարար Ի. Ուլդ Շեյխ Ահմեդի գլխավորած պատվիրակությունները, **Եգիպտոսի** հնությունների նախարար Խալիդ Ալ Անանին: **Թունիսի** նախագահ Բեժի Կաիդ Էլ Սեբսիի հետ երկկողմ հանդիպում է ունեցել ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը:

Հայաստանի և տարածաշրջանի երկրների միջև տեղի են ունեցել տարբեր մակարդակների մի շարք այլ փոխայցելություններ:

## 12. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Հայաստանը շարունակել է աշխատանքներն ամերիկյան աշխարհամասի պետությունների հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ:

**Սեպտեմբերի 10-ին** ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հեռախոսազրույց է ունեցել **Կանադայի** զբոսաշրջության, պաշտոնական լեզուների և Ֆրանկոֆոնիայի նախարար Մելանի Ժոլիի հետ, ապա **հոկտեմբերի 7-ին** ՖՄԿ 17-րդ գագաթաժողովի շրջանակներում տեղի է ունեցել Զոհրաբ Մնացականյանի և Մելանի Ժոլիի [հանդիպումը](#) Երևանում:

**Հոկտեմբերի 12-13-ը** կայացել է Կանադայի [վարչապետ](#) Զասթին Թրյուդոյի պաշտոնական այցը Հայաստան: Այցի ընթացքում նա հանդիպել է ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանին, վարչապետ Նիկոլ Փաշինյանին, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հետ:

**Սեպտեմբերի 27-ին** Նյու Յորքում տեղի է ունեցել Հայաստանի և Ուրուգվայի ԱԳ [նախարարներ](#) Զոհրաբ Մնացականյանի և Ռոդոլֆո Նին Նովոայի հանդիպումը:

**Ապրիլի 27-ին** ԱԳ նախարարի պաշտոնակատար Էդվարդ Նալբանդյանն ու Չիլիի արտակարգ և լիազոր դեսպան Ռոդրիգո Նիետոն ստորագրել են Հայաստանի Հանրապետության կառավարության և Չիլիի Հանրապետության կառավարության միջև՝ դիվանագիտական և պաշտոնական անձնագրեր ունեցող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջի վերացման մասին [համաձայնագիրը](#):

**Հուլիսի 13-ին** Հնագույն քաղաքակրթությունների ֆորումի 2-րդ նախարարական համաժողովի շրջանակներում ԱԳ նախարարի տեղակալ Աշոտ Հովակիմյանը հանդիպում է ունեցել Բուլղարիայի ԱԳ նախարար Ֆերնանդո Ուանակունի Մամանիի հետ:

Կայացել են քաղաքական խորհրդակցությունների ՀՀ ԱԳ նախարարության և **Մեքսիկայի (հոկտեմբերի 23), Գվատեմալայի (հոկտեմբերի 23), Արգենտինայի (հոկտեմբերի 29), Ուրուգվայի (հոկտեմբերի 31)** արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև:

## 13. ԱՖՐԻԿԱՆ ՄԱՅՐՑԱՄԱՔԻ ԵՐԿՐՆԵՐ

Հաշվետու տարվա ընթացքում կարևորվել է աֆրիկյան մայրցամաքի երկրների հետ երկկողմ և բազմակողմ ձևաչափերով համագործկացության ընդլայնումը: 2018թ. ընթացքում միջազգային հարթակների շրջանակներում տեղի են ունեցել տարբեր մակարդակներով մի շարք հանդիպումներ:

**Փետրվարի 22-24-ը** պաշտոնական այցով ՀՀ-ում է գտնվել **Մադագասկարի** Հանրապետության արտաքին գործերի [նախարար](#) Անրի Ռաբարի-Նձական: Վերջինս հանդիպումներ է ունեցել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի, ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի, ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

**Սեպտեմբերի 26-ին** Նյու Յորքում ընթացող ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 73-րդ նստաշրջանի շրջանակներում ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հանդիպել է **Մադագասկարի** ԱԳ [նախարար](#) Էլուա Մաքսիմ Դուվուի հետ:

**Օգոստոսի 22-ին** Հայաստան է այցելել **Ռուանդայի** արտաքին գործերի և համագործակցության [նախարար](#) Լուիզ Մուշիկիվաբոյի ղեկավարած պատվիրակությունը: Պատվիրակության կազմում, որպես Աֆրիկյան միության ներկայացուցիչ, ընդգրկված էր նաև **Գաբոնի** արտաքին գործերի, ֆրանկոֆոնիայի և տարածաշրջանային ինտեգրացիայի նախարար Ռեջի Իմոնգուլը: Պատվիրակությանն ընդունել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը:

**Սեպտեմբերի 24-ին** Նյու Յորքում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում է ունեցել **Ռուանդայի** [նախագահ](#) Փոլ Կագամեի հետ:

**Սեպտեմբերի 25-ին** Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի կենտրոնակայանում, վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում է ունեցել **Աֆրիկյան միության** հանձնաժողովի [նախագահ](#) Մուսա Ֆակիի հետ:

**Հոկտեմբերի 10-ին** ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հանդիպել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության նախարարական 35-րդ համաժողովի շրջանակներում Հայաստան ժամանած **Գամբիայի** արտաքին գործերի, միջազգային համագործակցության և արտերկրում բնակվող գամբիացիների հարցերով նախարար Մամադու Թանգարայի հետ: Հանդիպման

ընթացքում Հայաստանի և Գամբիայի արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները ստորագրեցին դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ [արձանագրություն](#):

**Հոկտեմբերի 11-ին** ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հանդիպել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթաժողովի աշխատանքներին մասնակցող **Գվինեայի** Հանրապետության [արտգործնախարար](#) Մամադի Տուրեի, **Սենեգալի** [արտգործնախարար](#) Սիդիկի Կաբայի և **Աֆրիկյան ինտեգրացիայի, հայրենադարձության և ֆրանկոֆոնիայի հարցերով նախարար** Մբագնիկ Նդիայեի, իսկ **հոկտեմբերի 12-ին՝ Տոգոյի** [արտաքին գործերի նախարար](#) Ռոբերտ Դյուսսեյի հետ:

## 14. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

### 14.1. Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպություն

**Հոկտեմբերի 7-12-ը** Երևանում՝ Կարեն Դեմիրճյանի անվան Մարզահամերգային համալիրում, կայացել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ [գագաթաժողովը](#), որն աչքի է ընկել մասնակցության բարձր մակարդակով և մասնակիցների քանակով: Հայաստան է ժամանել մոտ 100 պատվիրակություն, որոնցից 35-ը գլխավորում էին նախագահներ, փոխնախագահներ, վարչապետ և փոխվարչապետ, իսկ մնացյալը՝ նախարարների կամ դեսպանների մակարդակով: Երկու օրվա ընթացքում Ֆրանկոֆոնիայի պետությունների և կառավարության ղեկավարները քննարկել են կազմակերպության օրակարգային հարցեր, ինչպես նաև գագաթաժողովի՝ «Ապրել միասին» կարգախոսի ներքո Ֆրանկոֆոնիայի կազմակերպության հնարավոր ներդրումը գլոբալ մարդահրավերների դեմ պայքարում:

Պետությունների և կառավարության ղեկավարների կողմից վերջնական քննարկումների արդյունքներում ընդունվել են մի քանի փաստաթղթեր:

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթաժողովի ընթացքում ընդունվել է [Երևանյան հռչակագիրը](#), որն ուղղորդելու է ՖՄԿ գործունեությունն առաջիկա երկու տարիներին: Փաստաթղթում անդրադարձ կա կազմակերպության կատարած կարևորագույն աշխատանքներին և ուղենշվում է առաջիկա գործողությունները տարբեր ուղղություններով՝ կանանց իրավունքներ, ահաբեկչություն, կրթություն, միգրացիա, թրաֆիքինգ, կայուն զարգացման նպատակներ, կլիմայական փոփոխություն, միջմշակութային երկխոսություն և այլն:

Երևանի գագաթաժողովի «Ապրել միասին» կարգախոսը դրված է նոր հիմնարար փաստաթղթի՝ [«Ապրել միասին Երևանի Ֆրանկոֆոն կոչի»](#) հիմքում: Փաստաթուղթն ընդունվել է հայկական կողմի նախաձեռնությամբ: Այն արտացոլում է Ֆրանկոֆոնիայի համընդհանուր արժեքները՝ մարդու և ժողովուրդների իրավունքների պաշտպանությունը, ժողովրդավարությունը,

միջմշակութային ու միջկրոնական երկխոսությունը, և այն սկզբունքները, որոնք անհրաժեշտ են «Ապրել միասին» կարգախոսի արդյունավետ կյանքի կոչման համար:

Գազաթափողովին ընդունվել է վեց [բանաձև](#), այդ թվում՝ Ճգնաժամային իրավիճակների, ճգնաժամերից դուրս գալու և խաղաղության ամրապնդման վերաբերյալ բանաձևը, որում Ֆրանկոֆոնիայի անդամ երկրների և կառավարությունների ղեկավարները վերահաստատել են Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանն ուղղված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից գործադրվող ջանքերը սատարելու իրենց դիրքորոշումը:

Մնացած բանաձևերն են՝

- Քաղաքացիական և մարդու իրավունքների [կրթության](#) վերաբերյալ,
- Մարդու իրավունքների Փարիզյան սկզբունքների [25 ամյակի](#) վերաբերյալ,
- [Մշակութային](#) մասնակցության վերաբերյալ,
- [Գիտելիքի](#) փոխանցման և հետազոտությունների արժևորման վերաբերյալ,
- Անտեսված արևադարձային [հիվանդությունների](#) վերաբերյալ:

Հայաստանը ստանձնել է Ֆրանկոֆոնիայի գազաթափողովի նախագահությունը երկու տարի ժամկետով՝ մինչև 2020թ.: Հաջորդ գազաթափողովը կկայանա 2020թ.՝ Թունիսում:

**Հոկտեմբերի 7-12-ը** Ազատության հրապարակում կազմակերպվել է գազաթափողովի շրջանակներում ավանդաբար անցկացվող ֆրանկոֆոն [ավանդ](#):

## 14.2. Եվրասիական տնտեսական միություն

2018 թվականին Հայաստանը շարունակվել է ակտիվ ներգրավված լինել ԵԱՏՄ շրջանակներում տեղի ունեցող ինտեգրացիոն գործընթացներին: Հաշվի առնելով սահմանադրական փոփոխությունները՝ մայիսից Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդում Հայաստանը ներկայացված է եղել վարչապետի մակարդակով:

**Մայիսի 14-ին** Սոչիում կայացած Բարձրագույն խորհրդի նիստին հաստատվել է ԵԱՏՄ-ում դիտորդի կարգավիճակի տրամադրման կանոնակարգը և անդրանիկ անգամ նման կարգավիճակ շնորհվել Մոլդովային:

**Մայիսի 17-ին** կայացած Համաշխարհային մարտահրավերներ խորագրով գազաթափողովի շրջանակներում ստորագրվել են ԵԱՏՄ և անդամ պետությունների ու Իրանի միջև ազատ առևտրի գոտու ստեղծմանն ուղղված ժամանակավոր համաձայնագիրն ու ԵԱՏՄ և անդամ պետությունների և Չինաստանի միջև առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագիրը:

**Հոկտեմբերի 22-ին** Երևանում անցկացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի նիստը, որին զուգահեռ կայացել է ԵԱՏՄ և երրորդ երկրների պատվիրակությունների մասնակցությամբ [«Եվրասիական շաբաթ»](#) միջազգային համաժողովը:



**Դեկտեմբերի 6-ին** Սանկտ Պետերբուրգում կայացած Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստի շրջանակներում Հայաստանը ստանձնել է ԵԱՏՄ մարմիններում 2019թ. [նախագահությունը](#):

#### 14.3. Անկախ պետությունների համագործակցություն

Համագործակցությունն ԱՊՀ շրջանակներում շարունակել է մնալ ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը: Հայաստանն ակտիվ գործնական մասնակցություն է ունեցել կազմակերպությունում ծավալվող գործընթացներում:

**Սեպտեմբերի 28-ին** վարչապետ Նիկոլ Փաշինյանը Դուշանբեում մասնակցել է ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի [նիստին](#), իսկ առաջին փոխվարչապետ Արարատ Միրզոյանը՝ Համագործակցության կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստերին՝ **հունիսի 1-ին** Դուշանբեում և **նոյեմբերի 2-ին** Աստանայում: Ի դեմս փոխվարչապետ Գրիգորյանի ապահովվել է մասնակցություն ԱՊՀ տնտեսական խորհրդի չորս եռամսյակային (77-80-րդ) նիստերին: Հայաստանը մասնակցել է ԱՊՀ մասնակից պետությունների արտգործնախարարների խորհրդի երկու նիստերին՝ ապրիլի 6-ին (ԱԳ նախարարի մակարդակով) [Մինսկում](#) և սեպտեմբերի 27-ին (ԱԳ նախարարի տեղակալի) Դուշանբեում:

**Հուլիսին և նոյեմբերին** 2018թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք հռչակված Գորիսում անցկացվել են մի շարք մշակութային միջոցառումներ:

#### 14.4. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն

Հաշվետու տարում շարունակվել են քայլեր ձեռնարկվել ՀԱՊԿ շրջանակներում իրականացվող համագործակցության հետագա խորացման ու կատարելագործման ուղղությամբ: Հայկական կողմը շարունակել է քայլեր ձեռնարկել՝ կազմակերպության արդյունավետության բարձրացման, ՀԱՊԿ պետությունների կողմից միմյանց հանդեպ դաշնակցային պարտավորությունների անխաթար կատարումը ապահովելու նպատակով:

**Օգոստոսին** հայկական կողմը նախաձեռնել է ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի լիազորությունների վաղաժամ դադարեցման գործընթացը, որն ամփոփվել է հոկտեմբերի վերջին: Հաշվի առնելով, որ գլխավոր քարտուղարի պարտականությունների վաղաժամ դադարեցման դեպքերում կազմակերպության նորմատիվ իրավական բազան չի նախատեսում գործողությունների հստակ ընթացակարգ՝ հայկական կողմի նախաձեռնությամբ մեկնարկել են այդ մասով բացը լրացնելու աշխատանքները:

**Հունիսի 11-ին** ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանն Ալմաթիում մասնակցել է ՀԱՊԿ արտգործնախարարների խորհրդի [նիստին](#), որտեղ ներկայացրել է Կազմակերպությունում



Հայաստանի առաջնահերթությունները, Հայաստանի գնահատականներն ու մոտեցումները տարածաշրջանային և միջազգային մարտահրավերների և հիմնախնդիրների առնչությամբ, կազմակերպության շրջանակներում փոխգործակցության ամրապնդման մեխանիզմները, ինչպես նաև՝ անդրադարձ է կատարել խաղաղապահության բնագավառում ՀԱՊԿ կարողությունների շարունակական զարգացմանը:

**Սեպտեմբերի 26-ին** ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը Նյու Յորքում ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 73-րդ նստաշրջանի շրջանակներում և մասնակցել է ՀԱՊԿ անդամ պետությունների արտաքին գործերի [նախարարների](#) հանդիպմանը:

**Նոյեմբերի 8-ին** ՀՀ [վարչապետի](#) պաշտոնակատարի, արտաքին գործերի ու պաշտպանության նախարարների պաշտոնակատարների և անվտանգության խորհրդի քարտուղարի գլխավորած պատվիրակությունները մասնակցել են Աստանայում ՀԱԽ նստաշրջանին ու տարվա ընթացքում անցկացված ԱԳՆԽ, ՊՆԽ և ԱԽՔԿ նիստերին, որոնց ընթացքում համաձայնեցվել են քաղաքական, պաշտպանական ու մարտահրավերներին և սպառնալիքներին հակազդմանն առնչվող բազմաթիվ հարցեր:

**Դեկտեմբերի 6-ին** Միլանում գտնվող ԱԳ նախարարի պաշտոնակատար Զոհրաբ Մնացականյանը մասնակցեց ԵԱՀԿ նախարարական համաժողովին մասնակցող ՀԱՊԿ անդամ-պետությունների ԱԳ նախարարների [հանդիպմանը](#):

#### 14.5. Միավորված ազգերի կազմակերպություն

Հայաստանի Հանրապետությունը շարունակել է խորացնել իր ներգրավվածությունը Միավորված ազգերի կազմակերպության կառույցներում:

ԱԳՆ շարունակել է իր ակտիվ ներգրավվածությունը՝ Կայուն զարգացման նպատակների ազգայնացման գործընթացին: **Հուլիսի 14-18-ը** ՀՀ առաջին փոխվարչապետ Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակությունը Նյու Յորքում ներկայացրել է Կայուն զարգացման նպատակների իրականացման առաջընթացի վերաբերյալ ՀՀ առաջին կամավոր ազգային զեկույցը ՏՆՏՍՈՑԽՈՐՀ-ի հովանու ներքո գումարվող բարձր մակարդակի քաղաքական ֆորումի ընթացքում: **Հուլիսի 18-ին** ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը [մասնակցել](#) է ՏՆՏՍՈՑԽՈՐՀ-ի բարձր մակարդակի քաղաքական ֆորումին և հանդես եկել ելույթով: ԱԳ նախարարը Նյու Յորքում հանդիպում է ունեցել նաև ՄԱԿ-ի [գլխավոր քարտուղար](#) Անտոնիո Գուտերեշի հետ, որի ընթացքում ներկայացրել է Հայաստանում տեղի ունեցած վերջին ներքաղաքական զարգացումները, ընդգծվել է կառավարության՝ Հայաստանում ընտրությունների պատշաճ կազմակերպման գործում միջազգային գործընկերների հետ սերտորեն համագործակցելու պատրաստակամությունը: ՀՀ արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանը հուլիսի 17-ին Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում նախագահեց «Նորարարությունը, հանրագույն ներդրումները և Կայուն զարգացման նպատակները որպես բարեփոխումների խթանման գործիք» խորագրով բարձր

մակարդակի քննարկումը, որը կազմակերպվել էր ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության, ՄԱԿ զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) և ՄԱԿ-ում Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության մշտական ներկայացուցչության կողմից:

**Ապրիլի 16-ին** Նյու Յորքում ՀՀ-ն ընտրվել է **ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի անդամ**՝ 2019-2023թթ. ժամանակահատվածի համար:

**Հունիսի 13-ին** Նյու Յորքում ՀՀ-ն ընտրվել է **ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի անդամ**՝ 2019-2021թթ. ժամանակահատվածի համար:

**Սեպտեմբերի 24-28-ը** կայացել է **ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 73-րդ նստաշրջանը**, որին մասնակցել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորած պատվիրակությունը: Նստաշրջանի ընթացքում վարչապետ Փաշինյանը ելույթներով հանդես է եկել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում և Նելսոն Մանդելայի հիշատակին նվիրված խաղաղության գագաթաժողովի բացմանը, մասնակցել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից կազմակերպված “Leaving No One Behind in an Age of Technological Revolution” խորագրով միջոցառմանը, որի ընթացքում քննարկվել են տեխնոլոգիական հեղափոխության դարաշրջանում համագործակցության զարգացմանը, փորձի փոխանակմանն ու երկրների զարգացմանը վերաբերող հարցեր:

ՀՀ վարչապետի գլխավորած պատվիրակության կազմում Նյու Յորք մեկնած ԱԳ նախարարը մասնակցել է ՄԱԿ Քաղաքակրթությունների դաշինքի Բարեկամների խմբի նախարարական հանդիպմանը:

Նյույորքյան այցի շրջանակներում նախարար Մնացականյանը հանդիպել է Սիրիայի հարցով ՄԱԿ-ի ԳԲ հատուկ բանագնացի, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ, առավել թույլ զարգացած երկրների, ցամաքով շրջապատված զարգացող երկրների և զարգացող փոքր կղզի-պետությունների հարցերով բարձր ներկայացուցչի, ՄԱԿ գլխավոր քարտուղարի Մարդասիրական և արտակարգ օգնության համակարգման հարցերով տեղակալի, ՄԱԿ գլխավոր քարտուղարի փոխտեղակալ և Հակաահաբեկչական կոմիտեի գործադիր տնօրենի հետ:

**Սեպտեմբերի 27-ին** ՄԱԿ-ի ԳԱ 73-րդ նստաշրջանի շրջանակներում, ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը, լիիրավ անդամի կարգավիճակով, Նյու Յորքում մասնակցել է Հնագույն քաղաքակրթությունների ֆորումի նախարարական [հանդիպմանը](#): Իր ելույթում ԱԳ նախարարն անդրադարձել է Հայաստանի հավատարմությանը ֆորումի արժեքներին: Հուլիսի 13-ին Բոլիվիայի մայրաքաղաք Լա Պասում կայացած Հնագույն քաղաքակրթությունների ֆորումի 2-րդ նախարարական համաժողովին միաձայն հաստատվել է ՀՀ [անդամակցությունը](#) ֆորումին: Համաժողովի աշխատանքների արդյունքում մասնակից երկրները, այդ թվում Հայաստանի Հանրապետությունը, ընդունել են «Տիվանակուի հռչակագիրը»:

Հաշվետու տարվա ընթացքում ամբողջությամբ կատարելով անդամակցության գծով միջազգային կազմակերպություններին ֆինանսական պարտավորությունները, Հայաստանը հանդիսանում է լիարժեք անդամ և ձայնի իրավունք ունի ՀՀ կողմից անդամակցվող բոլոր միջազգային կազմակերպություններում: 2018թ. Հայաստանը ներառվել է ՄԱԿ-ի պատվո ցանկում՝

կազմակերպության կանոնավոր բյուջեին ժամանակին և ամբողջությամբ կատարված անդամավճարների համար:

Շարունակվել է համագործակցությունը **ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի, Թմրամիջոցների վերահսկողության միջազգային խորհրդի** հետ՝ նշված կազմակերպությունների գործունեության մի շարք ոլորտներով: Կազմակերպվել է ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների մասնակցությունը ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի հանդիպումներին, ներառյալ՝ Թմրամիջոցների հանձնաժողովի 61-րդ նստաշրջանին, Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի աշխատանքային խմբի հանդիպումներին և դասընթացներին:

**Հունիսի 25-27-ը** կայացել է Թմրամիջոցների վերահսկողության միջազգային խորհրդի պատվիրակության (International Narcotics Control Board - INCB) այցը Հայաստան:

2018թ. Հայաստանում սկսվել է **ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի** դիտարկման երկրորդ փուլը, որի ընթացքում դիտարկվել են կոնվենցիայի 2-րդ՝ Կանխարգելիչ միջոցներ և 5-րդ՝ Ակտիվների վերադարձ գլուխները:

Հայաստանի կառավարությունը շարունակել է սերտ համագործակցությունը **ՄԱԿ/ՄԱԶԾ** գրասենյակի հետ: Համագործակցությունը դրսևորվել է ինչպես նախապես ծրագրված ուղղություններով իրականացվող ծրագրերի, այնպես էլ ներքաղաքական իրողություններով պայմանավորված՝ վստահելի և թափանցիկ արտահերթ խորհրդարանական ընտրությունների կազմակերպման աջակցության ծրագրի տեսքով: Շարունակվել է նաև համագործակցությունը 2030 օրակարգի և ԿԶՆ ազգայնացման գործընթացների շուրջ: ՄԱԶԾ նաև աջակցել է ՀՀ կառավարությանը ազգային կամավոր զեկույցի նախագծման ընթացքում:

**Հունիսի 26-27-ին** Երևանում կայացել է աղետների ռիսկերի նվազեցման Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի տարածաշրջանային երկրորդ պլատֆորմի նստաշրջանը:

### **Ահաբեկչության դեմ պայքար**

**Հուլիսի 11-13-ը** կայացել է ՄԱԿ Անվտանգության խորհրդի հակաահաբեկչական կոմիտեի գործադիր տնօրինության (ԱԽ ՀԿԳՏ) պատվիրակության այցը Հայաստան, որի նպատակն էր համակողմանիորեն ուսումնասիրել ու գնահատել ՀՀ կողմից ՄԱԿ ԱԽ 1373 և հակաահաբեկչական մյուս բանաձևերի դրույթների կատարման գործընթացը, այդ ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների արդյունավետությունն ու արձանագրված առաջընթացը:

**Սեպտեմբերի 28-ին** Նյու-Յորքում ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը հանդիպում է ունեցել ՀԿԳՏ [ղեկավար](#) Միշել Կոնինկսի հետ:

### **ՅՈՒՆԵՍԿՕ**

**Հունիսին** ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Սիրիայի մշակութային ժառանգության անհապաղ պաշտպանություն» ծրագրի շրջանակներում՝ «Մատենադարան» և «Մաշտոց» հայ մշակույթի

պահպանման և զարգացման հիմնադրամների, ինչպես նաև Հայաստանի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովի աջակցությամբ, «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ հիմնադրամում տեղի է ունեցել սիրիացի փորձագետների համար «Ձեռագրերի և արխիվային փաստաթղթերի պահպանման և վերականգնման վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ի վերապատրաստման դասընթաց»-ը: Վերջինս ֆինանսավորվում է Եվրոպական միության և աջակցություն ստանում Ավստրիայի ու Ֆլանդրիայի կառավարությունների կողմից:

**2018թ. սեպտեմբերին** Հայաստանի թեկնածությունն առաջադրվել է 2021թ. Փարիզում կայանալիք ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գործադիր խորհրդի ընտրություններին՝ 2021-2025թթ. ժամանակահատվածի համար:

**Նոյեմբերի 13-ին** ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը Փարիզում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում հանդիպել է գլխավոր [տնօրեն](#) Օդրի Ազուլեի հետ: Վերջինս Երևանում կայացած Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթաժողովին մասնակցելու նպատակով այցելել է Հայաստան, երկկողմ հանդիպումներ է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ([հոկտեմբերի 11-ին](#)) և ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի հետ ([հոկտեմբերի 11-ին](#))՝ երկկողմ ծրագրերն ու հետագա անելիքները քննարկելու համար:

Հանդիպումների ժամանակ կարևորվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցության շարունակական ամրապնդումը, գիտության և կրթության ոլորտներում համագործակցության զարգացման հեռանկարներին և կազմակերպության հետևողական ուշադրությունը տարածաշրջանում մշակութային ժառանգության պահպանման հարցում:

Հայաստանը հանձնառություն է ստանձնել աջակցելու տիկին Ազուլեի նախաձեռնություններին, մասնավորապես, Իրաքի Մոսուլ քաղաքի վերածննդի ծրագրին՝ կրթական և մշակութային ոլորտներում փորձագիտական աջակցություն տրամադրելու միջոցով:

**Օգոստոսի 6-8-ը** Երևանում և Գառնիում տեղի է ունեցել Կենսաֆիզիկայի, կենսատեխնոլոգիայի և շրջակա միջավայրի անվտանգության բնագավառում հետազոտությունների և հետբուհական կրթության միջտարածաշրջանային ՅՈՒՆԵՍԿՕ/ՅՈՒՆԻԹՎԻՆ ցանցի ստեղծման մեկնարկային գիտաժողովը:

**Դեկտեմբերի 7-ին** Փարիզում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում «Ձինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1954թ. կոնվենցիային կից 1999թ. Երկրորդ արձանագրության կոմիտեի 13-րդ նիստի ընթացքում կոմիտեի անդամների կողմից միաձայն որոշում է կայացվել Հայաստանի կողմից ներկայացված «Գեղարդի վանք և Ազատ գետի վերին հովիտ» (Monastery of Geghard and the Upper Azat Valley) [վայրին](#)՝ որպես մարդկության համար բացառիկ կարևորություն ունեցող արժեք, ուժեղացված պաշտպանության կարգավիճակ (Enhanced protection) շնորհելու վերաբերյալ: «Գեղարդի վանք և Ազատ գետի վերին հովիտ» վայրը դարձել է Հայաստանի առաջին մշակութային արժեքը, որին ուժեղացված պաշտպանության կարգավիճակ է տրամադրվել:

#### 14.6. Եվրոպայում անվտանգության եվ համագործակցության կազմակերպություն

Հայաստանը շարունակել է ակտիվ մասնակցությունը ԵԱՀԿ գործունեության բոլոր երեք հարթություններում:

**Սեպտեմբերի 4-ին** ՀՀ արտգործնախարար Զոհրաբ Մնացականյանն [ընդունել](#) է ԵԱՀԿ Գլխավոր քարտուղար Թոմաս Գրեմինգերին: Հաջորդ հանդիպումը տեղի է ունեցել **դեկտեմբերի 7-ին** Միլանում՝ ԵԱՀԿ Նախարարական խորհրդի շրջանակներում:

**Սեպտեմբերի 11-ին** նախարար Մնացականյանն [ընդունել](#) է ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Գեորգի Ծերեթելին:

**Հոկտեմբերի 22-ին** Հայաստանի արտգործնախարարի պաշտոնակատար Զոհրաբ Մնացականյանն [ընդունել](#) է ԵԱՀԿ գործող նախագահի Հարավային Կովկասի հարցերով հատուկ ներկայացուցիչ Ռուդոլֆ Միխալկային:

**Հոկտեմբերի 23-ին** ԱԳ նախարարի պաշտոնակատարը [ընդունել](#) է ԵԱՀԿ մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչ Հարլեմ Դեզիրին:

**Դեկտեմբերի 6-7-ը** ԱԳ նախարարի պաշտոնակատարը [մասնակցել](#) է Միլանում կայացած ԵԱՀԿ Նախարարական խորհրդին և հանդես եկել ելույթով:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի փակվելուց հետո ՀՀ և ԵԱՀԿ հետ շարունակվել են Հայաստանում ԵԱՀԿ-ի հետ համագործակցության Ծրագրի իրականացման աշխատանքները: Այս համատեքստում **հունիսի 18-ին** Հայաստանի ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանն [ընդունել](#) է տարածաշրջանային այցով Երևանում գտնվող ԵԱՀԿ շուրջ երկու տասնյակ մասնակից երկրների մշտական ներկայացուցիչներին:

#### 14.7. Եվրոպայի խորհուրդ

2018թ. Հայաստանը շարունակել է ակտիվ մասնակցություն ցուցաբերել Եվրոպայի խորհրդի կանոնադրական և մասնագիտացած մարմինների աշխատանքներին:

**Հունվարի 23-24-ը** տեղի է ունեցել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական [այցը](#) Եվրոպայի խորհուրդ:

**Մայիսի 23-26-ը** Հայաստան են [այցելել](#) ԵսեսԿ Մոնիտորինգային կոմիտեի Հայաստանի պարտավորությունների կատարման հարցով համազեկուցողներ Ջուզեպպե Գալատին (Իտալիա) և Յուլիա Լովոչկինան (Ուկրաինա):

**Հունիսի 12-ին** ՀՀ ԱԳՆ-ում [տեղի է ունեցել](#) Հայաստան-ԵԽ 2015-2018թթ. Գործողությունների ծրագրի ղեկավար (միջգերատեսչական) կոմիտեի նիստը՝ 2015-2018թթ. ԳԾ արդյունքներն ամփոփելու և 2019-2022թթ. ԳԾ-ի առաջնահերթ ուղղությունները քննարկելու նպատակով:

**Սեպտեմբերի 15-21-ը** [տեղի է ունեցել](#) Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միլատովիչի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան:

**Նոյեմբերի 19-21-ը** տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի աշխատանքային այցը Եվրոպայի խորհուրդ: Կայացել են հանդիպումներ ԵԽ Գլխավոր [քարտուղարի](#), ԵԽԽՎ [նախագահի](#), ՄԻԵԴ [նախագահի](#), Մարդու իրավունքների հանձնակատարի, Վենետիկի հանձնաժողովի նախագահի հետ: Նախարար Մնացականյանը [մասնակցել](#) է ԵԽ Նախարարների կոմիտեի նիստին, ելույթով հանդես եկել Ժողովրդավարության համաշխարհային ֆորումին «Կանայք, անվտանգություն և ժողովրդավարացում բազմակողմության համատեքստում» խորագրի ներքո:

2018թ. Հայաստանը ստորագրել է Եվրոպայի խորհրդի հետևյալ [կոնվենցիաները](#).

- «Կանանց և ընտանեկան բռնության կանխարգելման» ԵԽ կոնվենցիա,
- «Կինեմատոգրաֆիական համալսարանի արտադրության մասին» ԵԽ (վերանայված) կոնվենցիա,
- Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին ԵԽ կոնվենցիա (2010թ. արձանագրությամբ փոփոխված),
- «Ֆուլբրոլային խաղերի և մարզական այլ միջոցառումների ժամանակ ապահովության, անվտանգության և սպասարկման խնդիրներին միասնական մոտեցման մասին» ԵԽ կոնվենցիա,
- «Ահաբեկչության կանխարգելման մասին ԵԽ կոնվենցիային կից՝ «Օտարերկրյա ահաբեկիչ զինյալների մասին» լրացուցիչ արձանագրություն,
- «Մարդու օրգանների թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիա:

#### 14.8. Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն

Շարունակվել է Հայաստան-ՆԱՏՕ ակտիվ համագործակցությունը Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի (ԱԳԳԾ) շրջանակներում:

**Մայիսի 24-ին** Բրյուսելում՝ ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում [ունեցել](#) ՆԱՏՕ/ԵԱԳԽ Գործընկերության և հավաքական անվտանգության կոմիտե + Հայաստան ձևաչափով նիստը, որի ընթացքում քննարկվել է ՀՀ-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի (ԱԳԳԾ) շրջանակներում իրականացված աշխատանքների մասին 2017թ. զեկույցը:

**Հուլիսի 12-ին** ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Բրյուսելում [մասնակցել](#) է ՆԱՏՕ-ի գագաթաժողովի շրջանակներում կայացած Աֆղանստանում «Հաստատական աջակցություն» առաքելության մասնակից երկրների և կառավարությունների ղեկավարների մակարդակով հանդիպմանը:

**Դեկտեմբերի 4-5-ը** ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը Բրյուսելում՝ ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում մասնակցել է «Հաստատական աջակցություն» առաքելության մասնակից և պոտենցիալ մասնակից երկրների արտաքին գործերի նախարարների ձևաչափով Հյուսիսատլանտյան խորհրդի նիստին: Այցի շրջանակներում նախարար Զոհրաբ Մնացականյանը հանդիպում է [ունեցել](#) ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի տեղակալ Ռոզ Գոտեմոլլերի հետ, որի ընթացքում քննարկվել են Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության ներկայիս ընթացքը և հեռանկարները:

## 15. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԳՆ և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեության հիմնական ուղղություններից մեկը եղել է ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների ավելացման, հայկական արտադրանքի արտահանման ծավալների մեծացման համար պայմանների ստեղծման, դեպի Հայաստան զբոսաշրջիկների հոսքի ավելացման, միջազգային հեղինակավոր գործարար համաժողովներում և փառատոններում ՀՀ մասնակցության ապահովման հետ կապված հարցերը:

### 15.1. Համագործակցություն բազմակողմ տնտեսական ձևաչափում

Ծավալվել է համագործակցությունը տնտեսական և ֆինանսական մասնագիտացված կազմակերպությունների և հաստատությունների, մասնավորապես, ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (UN ESCAP), ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO), ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (UN FAO), Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ՄՏՏՀ), Համաշխարհային բանկի՝ WB, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD-ՎՋԵԲ), Եվրոպական ներդրումային բանկի (EIB-ԵՆԲ) և այլ կառույցների հետ:

#### Սևծովյան Տնտեսական Համագործակցության Կազմակերպություն (ՄՏՏՀ)

**Հունիսի** վերջին Երևանում տեղի է ունեցել ՄՏՏՀ ԱԳ նախարարների խորհրդի 38-րդ հանդիպումը, որի ժամանակ բացման ելույթով հանդես է եկել ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը: Սրանով ավարտվել է կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության նախագահության շրջանը (2018թ. հունվար-հունիս):

Ադրբեջանի նախագահության շրջանակներում ՀՀ պատվիրակությունը **դեկտեմբերի 12-14-ը** Բաքվում մասնակցել է ԱՊԿ նիստին և ԱԳ նախարարների խորհրդի [հանդիպմանը](#):

**Հունիսին և նոյեմբերին** ՀՀ նախագահության ներքո Երևանում կայացել են ՄՏՏՀ Գործարար խորհրդի և ՄՏՏՀ ԽՎ Գլխավոր ասամբլեայի նիստերը:

**ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողով՝ UN ESCAP**

Հայաստանը մասնակցել է **մայիսի 11-16-ը** Բանգկոկում կայացած հանձնաժողովի 74-րդ նստաշրջանի աշխատանքներին:



## Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրներ՝ Landlocked countries

ՀՀ ԱԳՆ-ն մասնակցել է Աստանայում Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների հարցերով ՄԱԿ-ի Բարձր ներկայացուցչի գրասենյակի կողմից մայիսի **16-17-ը** Աստանայում անցկացված նախարարական հանդիպմանը, **մայիսի 21-22-ը** Մոնղոլիայի մայրաքաղաք Ուլան Բատորում Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների (LLDCs) միջազգային հետազոտական կենտրոնի կառավարիչների խորհրդի անդրանիկ նիստին և **հունիսին** նրան հաջորդող բարձր մակարդակի հանդիպմանը:

### ՏՐԱՍԵԿԱ

**Մարտի 6-ին** Երևանում ՀՀ նախագահությամբ կայացել է Եվրոպա-Կովկաս-Ասիա միջազգային տրանսպորտային միջանցքի՝ «ՏՐԱՍԵԿԱ» ծրագրի միջկառավարական հանձնաժողովի, հերթական 13-րդ նիստը:

### Միջազգային ծովային կազմակերպություն (ՄԾԿ)

**Հունվարի 19-ին** Հայաստանը դարձել է Միջազգային ծովային կազմակերպության (ՄԾԿ) լիիրավ անդամ:

### Ռեյատիվիստական աստղաֆիզիկայի կենտրոնների միջազգային ցանց՝ ICRA Net

ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչը **փետրվարի 8-ին** Հռոմում մասնակցել է ԻԿՐԱՆԵՏ-ի Կառավարման խորհրդի աշխատանքներին:

## 16. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ

2018 թվականին նախապատրաստվել է ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման (ՀՊԴ) ընթացակարգի համաձայն ներկայացվող Հայաստանի Հանրապետության երկրորդ միջանկյալ կամավոր զեկույցը: Զեկույցն անդրադառնում է ՀՊԴ շրջանակում ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքին: **Ապրիլի 19-ին** [ունեցել](#) զեկույցի հանրային քննարկումները, որից հետո այն փոխանցվել է ՄԱԿ-ի քարտուղարություն:

2018 թվականին նախապատրաստվել է և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեին փոխանցվել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի դրույթների



իրականացման վերաբերյալ ՀՀ երրորդ պարբերական զեկույցը: Մինչ այդ՝ **օգոստոսի 2-ին** [ունեցան](#) զեկույցի հանրային քննարկումները:

2018 թվականին ավարտվել են ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի դրույթների իրականացման նպատակով ՀՀ ազգային զեկույցի մշակման աշխատանքները: **Օգոստոսի 3-ին** տեղի Ջեկույցի հանրային [քննարկումները](#):

**Փետրվարի 27-ին** ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը ելույթ է ունեցել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 37-րդ [նստաշրջանին](#): Նախարարն իր ելույթում հիշատակել է Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում (Գանձակում), Մարաղայում և այլ վայրերում տեղի ունեցած հայ բնակչության կոտորածները՝ խորհրդի ուշադրությունը հրավիրելով այն հանգամանքի վրա, որ Ադրբեջանը դիմում է ամեն միջոցի ձգտելով կոծկել այս ոճրագործությունները: Ժնևում աշխատանքային այցի շրջանակներում Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար Զեիդ Ռաադ ալ-Հուսեյնին և Գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Ժնևի գրասենյակի գլխավոր տնօրեն Մայքլ Մյուլլերին:

**Մարտին** Հայաստանը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 37-րդ նստաշրջանի շրջանակներում ներկայացրել է «Ցեղասպանության կանխարգելում» բանաձևը, կրկին վերահաստատելով այն հանգամանքը, որ Հայաստանը ցեղասպանության կանխարգելման հարցում աշխարհում ստանձնել է առաջամարտիկի դերը: Բանաձևը վերահաստատել է ցեղասպանության դեմ պայքարի անհրաժեշտությունն ու այս հարցում միասնական ուժերով հանդես գալու կարևորությունը, շեշտադրելով ցեղասպանության կանխարգելման հարցում կրթության դերը: Բանաձևը համահեղինակել են ՄԱԿ-ի անդամ 64 երկրներ:

**Սեպտեմբերի 13-ին** տեղի է ունեցել ԱԳ նախարար Զ. Մնացականյանի [այցը](#) Ժնև: ԱԳ նախարարը մասնակցել է ՀՀ կողմից մարտին առաջադրված և ՄԻԽ շրջանակում կոնսենսուսով ընդունված Ցեղասպանության կանխարգելում 37/26 բանաձևի համաձայն կազմակերպված բարձրաստիճան քննարկմանը, որը նվիրված էր Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի 70-ամյակին: Այցի շրջանակում նախարարը որպես բարձրաստիճան հյուր հանդես է եկել նաև ՄԻԽ 39-րդ նստաշրջանի շրջանակում: Այցի շրջանակում նախարարը հանդիպել է ՄԱԿ-ի նորանշանակ Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար Միշել Բաշելեյի հետ:

**Նոյեմբերի 7-16-ը** կայացավ ՄԱԿ-ի Իսաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների հարցերով Հատուկ զեկույցող Կլեմեն Վուլեյի այցը Հայաստան:

**Դեկտեմբերի 10-ից 11-ը** Հայաստանը միացել է Անվտանգ, օրինական և ապահով միգրացիայի Գլոբալ հռչակագրին:

## 17. ԳԼՈԲԱԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՉ ԿՈՆՎԵՆՑԻՈՆԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

ՄԱԿ ԳԱ՝ Զինաթափման, գլոբալ մարտահրավերների և խաղաղության սպառնալիքների հարցերով զբաղվող Առաջին կոմիտեում Հայաստանը համահեղինակել է մի շարք բանաձևեր՝ ուղղված միջուկային զենքերի չտարածման և ռիսկերի նվազեցման, տիեզերքում առաջինը զենքերի չտեղակայման վերաբերյալ:

ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչը **մայիսի 15-ին** Փարիզում կազմակերպված Տարածման անվտանգության նախաձեռնության (PSI) 15-րդ տարելիցին նվիրված բարձրաստիճան պաշտոնյաների համաժողովին:

**Սեպտեմբերի 17-21-ը** Վիեննայում ՀՀ պատվիրակությունը մասնակցել է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության Գլխավոր կոնֆերանսի 62-րդ նստաշրջանին:

**Նոյեմբերի 19-20-ը** ՀՀ պատվիրակությունը մասնակցել է Քիմիական զենքի արգելման պայմանագրի մասնակից պետությունների 23-րդ համաժողովին:

## 18. ԽԱՂԱՂԱՊԱՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունն իր ակտիվ, հետևողական ներգրավվածությունն է ունեցել միջազգային խաղաղության և անվտանգության ուղղությամբ իրականացվող ջանքերին: Հայաստանը շարունակել է մասնակցությունն Աֆղանստանի (Հաստատակամ աջակցություն), Կոսովոյի (KFOR), Լիբանանի (UNIFIL) և Մալիի (MINUSMA) խաղաղապահ առաքելություններում: Շարունակվել է համագործակցությունը ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների դեպարտամենտի (DPKO) հետ:

ՀՀ-ն միացել է **2018թ. սեպտեմբերի 25-ին** ՄԱԿ-ի ԳԱ 73-րդ նստաշրջանի շրջանակներում կայացած ՄԱԿ խաղաղապահ գործողությունների թեմայով գագաթաժողովում ընդունված «ՄԱԿ խաղաղապահ գործողությունների ոլորտում ընդհանուր հանձնառությունների մասին» հռչակագրին:

### **Մասնակցություն ՄԱԿ ԱԽ մանդատի շրջանակներում իրականացվող խաղաղապահ գործողություններին**

ՀՀ ԱԳՆ իր իրավասությունների շրջանակներում շարունակել է համակարգել Լիբանանում և Մալիում ՄԱԿ հովանու ներքո իրականացվող բազմազգ խաղաղապահ գործողություններին ՀՀ զինված ուժերի խաղաղապահ անձնակազմի մասնակցությանն առնչվող քաղաքական ու կազմակերպչական բնույթի հարցերը, այդ թվում՝ խաղաղապահ զորախմբի հերթափոխ, թվակազմի փոփոխություն, ֆինանսական փոխհատուցումների տրամադրման գործընթացի ապահովումը: Այս համատեքստում ՀՀ ԱԳՆ կողմից շարունակական համագործակցություն է իրականացվել ՄԱԿ

քարտուղարության խաղաղապահ գործողությունների դեպարտամենտի (DPKO) և համապատասխան այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

## 19. ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԴԱՇՏ

Տարվա ընթացքում ԱԳՆ կողմից պատրաստվել և ստորագրման է ներկայացվել **77 միջազգային պայմանագիր** և ՀՀ միջազգային պայմանագրերի մասին օրենքի շրջանակներից դուրս միջազգային պայմանագիր չհանդիսացող միջազգային բնույթի **8 փաստաթուղթ**:

Նախարարության կողմից տարվա ընթացքում իրականացվել է **81 միջազգային պայմանագրի վավերացման կամ հաստատման** գործընթաց: 2018թ. ընթացքում ուժի մեջ է մտել **54 միջազգային պայմանագիր**:

2018թ. ավարտի դրությամբ նախագծային և փոխհամաձայնեցման ընթացակարգերի փուլում են գտնվում **350-ից ավելի** միջազգային պայմանագրերի նախագծեր:

Ավարտվել է ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հիման վրա «**Միջազգային պայմանագրերի մասին**» նոր օրենքի, «**Դիվանագիտական ծառայության մասին**» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և «**Պետական արարողակարգի մասին**» նոր օրենքի նախագծերի մշակումը, որոնք ընդունվել են Ազգային ժողովի կողմից և ուժի մեջ մտել 2018թ. ապրիլի 9-ից:

Տարվա ընթացքում նախարարության կողմից ՀՀ կառավարության քննարկման են ներկայացվել **32 որոշման նախագիծ**, այդ թվում՝ մի շարք պետությունների (Ավստրալիա, Նոր Զելանդիա, Սինգապուր, Կորեայի Հանրապետություն, Ալբանիա) քաղաքացիների համար վիզային ռեժիմի վերացման նպատակով:

## 20. ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչության և հյուպատոսական հիմնարկների կողմից սպասարկվել է **շուրջ 153 000** քաղաքացի:

Տարվա ընթացքում փոփոխություններ են կատարվել գործող իրավական ակտերում, որոնցով կանոնակարգվել և ավելի են դյուրացվել քաղաքացիներին մատուցվող հյուպատոսական ծառայությունները:

Հաշվետու տարում ՀՀ դեսպանություններից և հյուպատոսական հիմնարկներից ստացվել է **շուրջ 14 000** անձնագրավորման գործ:

Հյուպատոսական վարչությունը ընթացք է տվել ՀՀ քաղաքացիների, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից ստացված բազմաթիվ դիմումներին, կապված օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների խախտված իրավունքները վերականգնելու, օրինական շահերը պաշտպանելու, ինչպես նաև այլ հարցերում աջակցելու խնդրանքով:

ՀՀ կառավարության 04.09.2014թ. թիվ 942-Ա որոշման կատարումն ապահովելու համար հյուպատոսական վարչությունը շարունակել է [www.tundarc.am](http://www.tundarc.am) տեղեկատվական համակարգի՝ ՀՀ ԱԳՆ իրավասությանը վերաբերող բաժինների սպասարկումը, որի շրջանակում ևս պատասխանվել է ՀՀ քաղաքացիների դիմումներին և լրացուցիչ պարզաբանումներ են տրամադրվել տեսակապի միջոցով:

Հաշվետու տարվա ընթացքում E-visa համակարգի միջոցով տրամադրվել է **32 384** մուտքի արտոնագիր:

## 21. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակահատվածում կայացել է ՀՀ նախագահներ Սերժ Սարգսյանի 6 այց (1 պաշտոնական և 5 աշխատանքային) և Արմեն Սարգսյանի 15 (1 պաշտոնական և 14 աշխատանքային), վարչապետ Կարեն Կարապետյանի 4 (1 պաշտոնական և 3 աշխատանքային) և Նիկոլ Փաշինյանի 15 (1 պաշտոնական և 14 աշխատանքային), առաջին փոխվարչապետ Արարատ Միրզոյանի 4 աշխատանքային այց և ԱԳ նախարարներ Էդվարդ Նալբանդյանի 9 (2 պաշտոնական և 7 աշխատանքային) ու Զոհրաբ Մնացականյանի 16 (1 պաշտոնական և 15 աշխատանքային) արտերկիր կատարած թվով 69 պաշտոնական և աշխատանքային այցեր, տեղի է ունեցել օտարերկրյա շուրջ 114 բարձրաստիճան պատվիրակությունների պետական, պաշտոնական և աշխատանքային այցելություններ Հայաստանի Հանրապետություն:

Համապատասխան աջակցություն է ցուցաբերվել ՀՀ նախարարություններին, գերատեսչություններին, տարածքային կառավարման պետական մյուս մարմիններին՝ ՀՀ ժամանող թվով 52 բարձրաստիճան պատվիրակությունների ընդունելության կազմակերպման հարցում:

## 22. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2018 թվականի դեկտեմբերի դրությամբ Հայաստանի Հանրապետության հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել է թվով 175 պետություն: Դիվանագիտական հարաբերություններ են հաստատվել Կիրիբատիի և Գամբիայի հետ:

Հայաստանում հավատարմագրված է 34 ռեզիդենտ և 79 ոչ ռեզիդենտ դեսպան, 25 միջազգային կազմակերպության ներկայացուցիչ, 1 գլխավոր հյուպատոս և 39 պատվավոր հյուպատոսներ:

2018թ. ագրեման է տրվել 30 օտարերկրյա դեսպանների, հավատարմագրեր են հանձնել 19 դեսպաններ և 6 միջազգային կազմակերպության ներկայացուցիչներ, հավատարմագրվել են օտարերկրյա 3 պատվավոր հյուպատոս, ինչպես նաև՝ համաձայնություն է տրվել ՀՀ-ում օտարերկրյա 12 ռազմական կցորդի:

2018թ. ավարտի դրությամբ արտերկրում ՀՀ-ն ունի հավատարմագրված 41 ռեզիդենտ դեսպաններ, որոնք համատեղության կարգով հավատարմագրված են ընդհանուր առմամբ 73 երկրում:

ՀՀ մշտական ներկայացուցիչներ են նշանակված 11 միջազգային կազմակերպություններում, արտերկրում գործում են ՀՀ 10 գլխավոր հյուպատոսություն, 1 հյուպատոսական գրասենյակ և 40 պատվավոր հյուպատոսություն:

## 23. ՀՀ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

2018թ. ընթացքում ՀՀ ԱԳՆ Դիվանագիտական դպրոցում անցկացվել են վերապատրաստման երեք ծրագրեր՝ «Հյուպատոսական գործունեություն» (մեկամսյա), «Դիվանագետների և պետական մարմինների արտաքին կապերի համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատակիցների» (երկամսյա) և «Արտաքին հարաբերությունների վերաբերյալ լրագրողների» (ութօրյա) վերապատրաստում: Այս դասընթացներին մասնակցել են ՀՀ նախագահի, ԱԺ և կառավարության աշխատակազմների, արտգործնախարարության, պետական կառավարման մարմինների, զանգվածային լրատվական միջոցների 40-ից ավելի աշխատակիցներ:

2018թ. ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցն ունեցել է 24 շրջանավարտ:

2017-18թթ. դիվանագիտական դպրոցի ծրագրերում դասավանդել են 87 դասախոս՝ 27 պետություններից:

## 24. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ

Տարվա ընթացքում շարունակվել են ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումների վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացմանը, մեր երկրի միջազգային հեղինակության ամրապնդմանն ուղղված քայլերը:

ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանից հարցազրույց են վերցրել ռուսական «ИТАР-ТАСС» լրատվական գործակալությունը, The Independent օրաթերթը, «Эхо Москвы» և «Ամերիկայի ձայնը»

ռադիոկայանը, «Ռոսիա 24» հեռուստաընկերությունը, հնդկական WION TV լրատվական հեռուստաալիքը:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հարցազրույց է տվել «Ալ Զազիրա», «Դոյչե Վելե», «Ֆրանս-24», РБК, «Միր» և «Ռոսիա 24» հեռուստաընկերություններին, ֆրանսիական միջազգային ռադիոկայանին (RFI), «Russia Today» ռուսական միջազգային հեռուստաալիքին, ֆրանսիական Le Monde օրաթերթին, «Կոմերսանտ» թերթին:

ԱԳ նախարարի պաշտոնը ստանձնելուց հետո Զոհրաբ Մնացականյանն ունեցել է 20 ելույթ և 18-ից ավելի հարցազրույց է տվել հայաստանյան և միջազգային լրատվամիջոցներին, ինչպիսիք են EUsobserver-ը, «Ասոշիեյթիդ Պրես» և «ITAP-TACC» լրատվական գործակալությունները: ԱԳ նախարարն ընդունել և զրույց է ունեցել թուրքական և ռուսական առաջատար լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ:

Հայաստանի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով ՀՀ ԱԳՆ-ն համագործակցել է մի շարք միջազգային լրատվամիջոցների հետ:

Գերմանական առաջատար «Frankfurter Allgemeine» օրաթերթում, «Stern» և «Der Spiegel» ամսագրերում տպագրվել են Հայաստանին նվիրված հատուկ ներդիրներ:

**Դեկտեմբերի 18-ին** «The Economist»-ը Հայաստանը ճանաչել է որպես տարվա երկիր:

**Դեկտեմբերի 31-ին** Հայաստանը «Forbes»-ի կողմից ընդգրկվել է ճանապարհորդությունների համար մատչելի ուղղությունների շարքում:

Աշխատանքներ են տարվել Հայաստանի և Արցախի վերաբերյալ հատուկ նախագծեր իրականացնող օտարերկրյա լրագրողական խմբերի հետ:

Տարվա ընթացքում, հատկապես ապրիլին տեղի ունեցած ներքաղաքական զարգացումներից հետո, Հայաստանը գտնվել է աշխարհի տարբեր լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում: Հայաստանի մասին հաղորդաշարեր պատրաստելու նպատակով նկարահանումներ են իրականացրել մի շարք միջազգային լրատվամիջոցների ներկայացուցիչներ, մասնավորապես՝ Phoenix, CCTV6, CCTV7, РЕН ТВ, Коммерсант, РИА Новости, Эхо Москвы, Известия, ITAP-TACC, Московский Комсомолец, Независимая газета, РБК, Die Presse, Russia Today, Lenta.ru, Interfax, և մի շարք այլ նկարահանող խմբեր:

ԱԳՆ կողմից շարունակվել է այլ երկրներում Հայաստանին նվիրված միջոցառումների, ինչպես նաև Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների՝ միջազգային լրատվամիջոցների կողմից

լուսաբանման համակարգումը:

ՀՀ ԱԳՆ համակարգել է Հայաստանի առաջին Հանրապետության **100-ամյակին** նվիրված միջոցառումները աշխարհի տարբեր երկրներում:

ԱԳՆ իրականացրել է **ապրիլ-մայիս** ամիսների ՀՀ ներքաղաքական ընթացքում և ՀՀ վարչապետի ընտրության օրերին Հայաստան ժամանած շուրջ 200 լրագրողների հավատարմագրումն ու աշխատանքների կազմակերպումը:

**Մարտի 13-ին** Ստոկհոլմում արտգործնախարար Է. Նալբանդյանը հանդիպում է ունեցել Շվեդիայի առաջատար վերլուծական կենտրոնների ղեկավարների և բարձրաստիճան դիվանագետների հետ:

**Մարտի 15-ին** Կոպենհագենում Հայաստանի ԱԳ նախարար Է. Նալբանդյանը հանդիպել է Արտաքին քաղաքականության դանիական ընկերակցության անդամների հետ՝ ներկայացնելով նաև ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացը:

**Հուլիսի 16-25-ը** ԱԳՆ դիվանագիտական դպրոցում տեղի է ունեցել արտաքին քաղաքականությունը լուսաբանող լրագրողների վերապատրաստման [դասընթաց](#):

ՀՀ ԱԳՆ աջակցությամբ, Ֆրանկոֆոն երիտասարդական խորհրդարանի կողմից **սեպտեմբերի 11-12-ը** կազմակերպվել է Ֆրանկոֆոն երիտասարդական ֆորումը, որին մասնակցել է նաև Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար Միկաել Ժանը: Ֆորումի շրջանակներում Ֆրանկոֆոնիայի գլխավոր քարտուղարը հանդես է եկել բացման խոսքով, պատասխանել մասնակիցների հարցերին:

ԱԳՆ կողմից համակարգվել են **սեպտեմբերի 23-ին** կայացած Երևանի քաղաքապետի ընտրությունների լուսաբանումը միջազգային լրատվամիջոցների կողմից:

**Հոկտեմբերի 7-12-ը** Երևանում կայացած Ֆրանկոֆոնիայի Մշտական խորհրդի 105-րդ [նիստի](#), Ֆրանկոֆոնիայի նախարարական 35-րդ [համաժողովի](#) և Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթաժողովի աշխատանքները լուսաբանելու նպատակով հավատարմագրվել են ավելի քան 600 լրագրող:

**Դեկտեմբերի 10-11-ը** Երևանում տեղի ունեցած Ընդդեմ ցեղասպանության հանցագործության Երրորդ գլոբալ ֆորումի շրջանակներում արտաքին գործերի նախարարության կողմից՝ կառավարության Տեղեկատվական-վերլուծական ՊՈԱԿ-ի աջակցությամբ, կազմակերպվել են անհատական հարցազրույցներ Ֆորումի բոլոր բանախոսների հետ: Հարցազրույցների լուսաբանման աշխատանքների ընթացքում համագործակցություն է իրականացվել ՄԱԿ-ի լրատվական [ստորաբաժանման](#) (UN Web TV) հետ:

Մեծ է եղել հետաքրքրությունը Հայաստանում կայացած խորհրդարանական արտահերթ ընտրությունների նկատմամբ: Դրանք լուսաբանելու նպատակով ԱԳՆ-ն հավատարմագրել է օտարերկրյա մոտ 40 լրատվամիջոցից շուրջ 80 ներկայացուցիչ:

Տարվա ընթացքում ընդհանուր թվով հավատարմագրվել է ավելի քան 1000 լրագրող: